


Կ. ՄԱՍԻՔԱՆՅԱՆ





891.99

Մ-22

ՎԱՀԱՆ ՄԱՄԻՋԱՆՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՕՐԵՆՔ

(ՊԱՏՄՎԱԾԻՆԵՐ)

11
28497
9442



ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ԵՐԱՅԱՆ 1946

Գիրքն անվիրում եմ Հայրենական
Մեծ պատերազմի նակատում զոհված
Ռաֆայել Մամիջանյանի պաշտոն
հիշատակին: ՀԵՂԻՆԱԿ

Շապիկը եկ իյուստրացիաները ցկարիչ ԱՐԱՄ ԿՈՋՈՅԱՆԻ

Ваган Мамилжаниян
ЗАКОН ГОР
сборник рассказов
(на армянском языке)
АРМГИЗ, ЕРЕВАН
1946

Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ք

Ընթերցող հասարակության ուշադրությանը հանձնարարվող
Ֆերկա գրքույկը գրող Վ. Սամիջանյանի պատմվածքների առաջին
ժողովածուն է հանդիսանում:

Պատմվածքների համար եիմնական նյութ են ծառայել հեղի-
մակի նանապարհորդական տպավորությունները, որոնք նա գրի
է առել անմիջականորեն, պարզ, երբեմն անպանույն, բայց կեն-
դանի ոնով:

Հեղինակը մասնագիտությամբ արհեստավոր լինելով ոչ միայն
օիրել ու ապրել է գրականությամբ, այլև ինքն է փորձել գրել,
նվիրվել գրականությանը, իր հետ բերելով կյանքի փորձն ու
շրջապատը դիտելու ու նանաչելու ունակությունը:


Հեղինակն այժմ աշխատում է հայրենական պատերազմին
նվիրված քեմայի վրա, օրի հատվածներից մեկը տեղ է գտել
Ֆերկա ժողովածուի մեջ:

Վ. Սամիջանյանի առաջին գործերը տպվել են Թբիլիսիի
Ֆայ պարբերական մամուլում վերջին տասնամյակի ընթացքում.
Նա գրական միջավայր է մտել Վրաստանի Սովետական Գրող-
ների Միության Հայկական սեկցիայի շուրջը համախմբված գրա-
չանությունն իմացող ու ընթերցասեր հասարակության շրջանից:

ԽՍԲԱԿԲՈՂ

Թբիլիսի. 1945 թ.

10 գեկա.



Մ Ե Ղ Ր Ի Ո Ւ Մ

(ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ)


1.

Միրելի ընկեր.

Հիշում ես, սիրելիս, իմ հայրենի գյուղը մեկնելիս՝ անհուն վարդապետի սեղանների իմ ձեռքը և խնդրեցիր, որպեսզի իմ տպավորություններն ու ապրումները հաղորդեմ քեզ նամակներով: Ինչպես տեսնում ես, կատարում եմ քո ցանկությունը: Միայն թույլ տուր ինձ, խնդրեմ, տպավորություններս հաղորդեմ քեզ հրապարակորեն, մի գուցե այդ հետաքրքիր լինի նաև ուրիշներին համար, մանավանդ իմ սիրելի հայրենակիցներին համար՝ նրանց համար, որոնք, մի գիտե, ինձ նման քանի-քանի տարիներ առաջ դուրս եկել հայրենի գյուղից և նրա կարոտն են քաշում և մի գիտե ինչ և ինչ պատճառներով չեն կարողացել գալ հայրենի օջախը, գեթ մի քանի օրով: Այո՛ նրանք իրավունք ունեն այդ անելու: Չէ՞ որ նրանք էլ ինձ նման աշատեղ, այս գյուղի հայրենի կտուրի տակ են ծնվել, նրա հող ու ջրով սնվել, նրա օդը շնչել, նրա քաղցր բույրով հարբել, նրա գետի օրորը լսել, գիշերային խորհրդավոր ժամերի շնչով երազել ..

Քսանահինգ երկար տարիներ են անցել այն օրից, երբ հեռացա մեր գյուղից ու այսօր միայն բախտ ունեցա այցի գալու և ահա գրում եմ քեզ առաջին նամակս:

Այո, քառորդ դար առաջ հենց այս տեղերով, Արաքսի հիմնավուրց ժառոտ ափերով, նեղ ու ահավոր ճանապարհներով եմ անցել: Այդ այն սև օրերին էր, երբ դաժան դաշնակցականները փերել էին մեր այս գեղեցիկ լեռնաշխարհին: Այդ այն տարի-



ներն էին, երբ մեր գյուղացին վաղ լուսաբացից մինչև ուշ գիշեր աշխատում էր քրտնաթոր ու դատարկ նստում: Այն արյունալի ու դառն օրերին էր, երբ եղբայրասպան պատերազմները շնորհիվ ժողովուրդը տառապում էր սովի ճիրաններում: Ծանր ու հոգեմաշ օրեր էին: Հենց այդ օրերին խոր կակիժով թողեցի ծննդավայրս և հեռացա այն մտքով, որ էլ երբեք չվերադառնամ:

Հեռացա:

Հեռացա նեղ ու քարքարոտ ճանապարհներով, հեռացա գրաստ նստած, օրորվելով ու սայթաքելով:

Այսօր վերադարձա նույն տեղերով, բայց արդեն գնացքով:

Որքան փոփոխություն, գրաստ և գնացք. գրաստների քարավան—վագոնների շարան:

Այն օրերին անվախ ավազակներն էին շրջում այս վայրերում, իսկ Արաքսը, որ հոսում էր խոր ու անելի անդունդների միջով, ճիգ էր թափում՝ դուրս պրծնելու իրեն կաշկանդող ժայռերից. գոռում էր, գոչում, թքում իր ասիերին և խուլ որոտում:

Քանի՜ քանի գրաստավորներ են սայթաքել ու կուլ գնացել Արաքսի մոլեգնող հորձանքներում: Այժմ կարծես մոգական դավադանի հարվածով ամեն ինչ փոխվել է: Որպես կենսաբար երակներ ձգվել են երկաթգիծն ու խճուղին անառիկ լեռների լանջերով ու ձորերով: Թվում է, թե մտել եմ մի կախարդական աշխարհ:

Այո, հայրենիք վերադարձա գնացքով: Որքան էի երազել ու փափագել և ահա այսօր այդ բախտն ունեցա: Ուրախությունից սիրտս ավելի արագ և ամուր էր զարկում, քան թե գնացքի անիվներն էին թխկթխկում: Ուզում էի գնացքն ավելի արագ սլանար՝ իմ մտքերին համընթաց:

* * *

Գնացքը կանգ առավ այնտեղ, ուր Մեղրի գետը միախառնվում է Արաքսի հորձանուտ ջրերին, որտեղից սկիզբ են առնում մեր այգիները: Իջնելով գնացքից քայլերս ուղղեցի դեպի վաղուց կարոտած հայրենի գյուղը...

Սիրելիս, զգ՞ում ես հուզմունքս: Ես արդեն քայլում եմ հայրենի գյուղի ճանապարհով, մեր այգիների միջով, մանկական քաղցր հուշերի հետ կապված այս վայրերով: Իմ քաղցր հայրե-

Նիք, երկար ընդմիջումից հետո վերջապես բախտ ունեցա նորից քո գիրկն ընկնել և քո օդը շնչել... Հուզմունքից սիրտս աշնպես ռաժգին է բաբախում, կարծես վանդակի մեջ թփրտացող դեղձա-
Նիկ լինի, Կարոտած ու պապակած սրտով, անհագ աչքերով ան-
հանգիստ նայում եմ չորս կողմս, դիտում հեռուները և քայլում
առաջ: Ահա նորից երևաց մեր հայրենի գետը: Նա հոսում է լայ-
նանիստ հովտի միջով, որտեղ փռված են ընդարձակ ու քաղց-
րապտուղ այգիները...

Բեթհովենյան հիասքանչ ոչ մի երաժշտություն, տաղանդա-
վոր նկարչի ոչ մի վրձին չի կարող այսքան լիությամբ հա-
գուրդ պատճառել իմ ծաբավ հոգուն: Որքան մոտ են իմ սրտին
ու քաղցր են պտղաբեր ծառերի դալար ճյուղերը, տերևների սո-
սափյունը, նրանց մեղմանուշ փափսոցը. ամբողջ աշխ հովտի
շունչը... կարծես բոլորը—բոլորը միասին մի լեզու առած խոսում
են իմ հոգու հետ, ողջունում վաղեմի հարազատին:

Մտեցա գետին: Որքան դյուրիշ էր նրա անուշ ձայնը:
Դա նույն աշխ քաղցր մեղեդին էր, որ ես լսել եմ մանուկ հա-
սակում իմ պատանեկության տարիներին: Կարծես թե այդ մե-
ղեդու մեջ մի հանդիմանություն կա դեպի ինձ, որ ես հեռացել
եմ իրենից, ապաստանել ուրիշ երկնքի տակ: Ես բարե տվի նը-
րան: Լսելով վաղեմի ծանոթ ձայն, կարծես թե ականջ առավ,
նայեց ինձ և ճանաչելով լայնորեն ժպտաց: Ուրախ հուզմուն-
քից շառաչեց և դռնմներով առաջ հորդեց: Ես ընկերացա նրան,
մենք քայլեցինք կողք-կողքի: Երկար խոսեցինք միմյանց հետ,
նա կամեցավ պատմել ինձ իր նախկին տերերի մասին, որոնք
արյունով էին ներկում իր ափերը, սակայն ես կանխեցի նրան.
—հաճույքով կլսեմ քեզ, բայց մի ուրիշ անգամ... և առաջ ան-
ցա: Դետն էլ սկսեց համբուլներ քաղելով առաջ ընթանալ, կար-
ծես այդ համբուլներով մնաս բարե էր ասում, որ էլ երբեք, երբեք
չի վերադառնալու և շուտով խառնվելու է մայր Արաքսի հետ:

Քայլում եմ գետնի վեր, ուզում եմ ժամ առաջ հասնել
հայրենի գյուղը, որը փափագել եմ տեսնել, մտքով սլացել եմ,
պատկերել և վերաբրտադրել նրա տիպարը: Կարճ ժամանակից
հետո կտեսնեմ իմ գյուղն իրականում: Է՛լ ավելի եմ փութացնում
քայլերս:

Ահա այն հինավուրց ուռիներից մի քանիսը, նրանք դեռ
այնտեղ են: Շատ անգամ եմ սրանց դալար ճյուղերից կտրել և

Վեղեհահան անելով թեթև ու գեղեցիկ դամբուղներ հյուսել: Նը-
քանք զեռ մնացել են կանգուն, որպես հին պատմիչներ և հի-
շեցնում են ինձ այն ելևեղանքներով, որ կատարվել է հենց
այս ուռիների տակ շատ տարիներ առաջ:

Ի՞նչ սոսկալի ոճիր:

Պարնան մի օր այստեղ էր եկել մեր համազուգացի Իգնատը:
Նա երեսուն տարեկան առույգ մի երիտասարդ էր: Եկել էր ճյու-
ղեր ժողովելու: Սև հոգու տեր մի մարդ, սև մտքերով պաշար-
ված, փոքի մոլուցքով տարված՝ դարանամուտ հետևում է նրան
և ապա թփից-թուփ անցնելով, մի մութ անկյունից հրացանն
ուզում, կրակում է և զեռ պես անհետանում:

Ցավոք սրտի, այդ այլանդակ փողամուրը մեր գյուղացի էր,
անունը Ծատուր: Հիշում եմ ինչպես այսօր, մենք երեխաներս,
վազելով հավաքվեցինք այստեղ: Դեռևս սպանվածի ձեռքումն էր
մնացել դալար ճյուղերի փունջը, նա ընկել էր երեսն ի վար:

Երկար ընտելությունից պարզվեց, որ սպանվածի հարազատ
քույրը Զիլովը կաշառել էր մարդասպանին, որպեսզի վերջ տա
եզրուր կյանքին, նրա բաժին վարելահողին տիրանալու նպատա-
կով: Ահա գոյության կուլի այլանդակ ձև: Հողի պակասության
պատճառով առաջացած մարդասպանություն:

Սիրելի ընկեր, քեզ եմ թողնում դատելու թե ով էր հան-
ցավորը այս գործում: Այնուհանդերձ, ինչ խոսք, որ Զիլովը և
մարդասպանը դատվեցին, սակայն ոչ թե օրենքի կողմից, այլ
ժողովրդի, հենց Մեղրու բնակիչների կողմից:

Նա երկար մտախոհ նայում եմ այս մենավոր ուռիներին,
որոնք արմատներով թաղվել են ջրերի մեջ և երկար-երկար
տարիներ ագահորեն ծծում են գետի սառը, պարարիչ հեղուկը և
չեն հագեցնում... Նրանք կարծես լեռնալան երկարածամ հարաներ
լինեն, որոնք գլուխները քնքշորեն թեքել են ջրերի վրա, շուրթ-
շրթի տված ջերմագին համբույր են քաղում և վրդովված շնչում
ու պատմում են իրար այս վաղեմի ողբալի դեպքը...

* * *

Կրկին բարձրանում եմ գետն ի վեր, դեպի գյուղը: Սա իմ
օրորանն է. անհագ դիտում եմ շրջապատը: Ալեկոծ հուզմունքի
մեջ եմ: Մի աներևույթ ուժից մղված՝ առաջ եմ ընթանում: Այն-

պէս ուրախ եմ, այնպէս երջանիկ, որ կարծես կյանքիս մեջ ոչ մի փորձանքի մեջ չեմ ընկել, տխրութեան ու վշտի ոչ մի ամսջ չի մթագնել իմ գեմքը:

Այսպէս դժայլված գնում էի առաջ, երբ հանկարծ ձախակողմյան այգիների միջից տեսիլքի պէս հայտնվեց մի երիտասարդ աղջիկ՝ հաղիվ տասնյոթ տարեկան: Նա գեղեցիկ էր ու թարմ, կարծես այս այգիների փերին լինէր, այս պտղատու ծառերին շունչ տվողը: Նա նույնպէս ինձ նման ուրախ ապրումների մեջ էր: Ինքնաբերաբար կամեցա խոսել նրա հետ. կարծես վաղեմի ծանոթ լինէի, խոսել, ժամ առաջ հարց ու փորձ անել: Մենք գնում էինք կողք կողքի:

— Ո՞ւր եք գնում այդպէս մենակ:

Իմ անսպասելի ու տարօրինակ հարցից կիսաշփոթ նա նայեց ինձ ու համեստորեն պատասխանեց.

— Տուն եմ գնում:

Նրա անուշ ձայնը դրավեց իմ ուշադրութեանը: Ես դիտեցի նրան: Նա գեղեցիկ էր ու անմեղ, բարեկազմ իրանով, սև ու խոշոր աչքերով, այս այգիների մեջ հասունացող նռան պէս ուռած կրճքով, ամրակազմ, բարեձև ոտքերով:

Սիրելիս, միթե՞ քաղաքներում ես չեմ հանդիպել ավելի գեղեցիկին: Բայց այս օրիորդն ինձ ավելի մոտ թվաց, ավելի հարազատ, չէ՞ թէ նա այստեղի բնակիչ է, համագյուղացի, գուցէ և այս այգիների թաղուհին: Ինձ թվաց, որ այս լեռնաշխարհի գիցուհին է նա, որ իջել է այս հովիտն ինձ ուղեկցելու մինչև մեր գյուղը:

— Ի՞նչպէս է ձեր անունը:

— Արմենուհի—մեղմորեն պատասխանեց նա:

Նայելով նրա գիշերվա պէս սև մազերին, որոնք փարթաւ մորեն իջել էին մինչև գեղեցիկ ուսերը, ես ակամա լսելի ձայնով շշնջացի.

— Որքան գեղեցիկ անուն ...

* * *

Գետի մյուս ափին, այգիներից բարձր, սեպաձև, անառիկ ժայռերի պատշարքի մեջ գծագրվեց մեր գյուղի ուրվագիծը:

Հսկա մի կամուրջով անցնում եմ գետի մյուս ափը:

Դեռ վառ կերպով հիշում եմ հին օրերի խղճուկ կամուրջը՝ Բարակ գերաններ և փայտիկներ, որոնց վրա քայլելիս օրորվում էինք վեր ու վար: Հողն աստիճանաբար թափվում էր վրայից և կարճ ժամանակից հետո մնում էր միայն կամրջի ողորմելի կըմախքը, այն էլ գետի վարարած ժամանակ կատաղի ջրերը խորտակում էին և քշում հեռու: Ճանապարհ չկար: Գյուղի գլխից ամեն օր դուռը հրապարակում ձիպտը ձեռքին գոչյուններով և հայհոյանքի տարափով ստիպում էր այս ու այն խեղճին գնալ նոր կամուրջ պատրաստելու, և այսպես ամեն անգամ նույն պատմությունը:

Այն գետը, որ մանավանդ զարնանը խլացուցիչ ձայներով ու բարձրագույն վայնասունով տեղահան եղած փոթորկող ծովպես հորդանում ու քշում տանում էր չարքաշ գյուղացու աճեցրած ու մշակած ալիքները, այժմ այդ սանձարձակ գետը մայիսյան հեղեղներին անգամ հոսում է այն ուղիով, որ նրա համար գցել է մարդ-ճարտարապետը: Այժմ անցնում ենք այնպիսի մի անսասան ու մեծ կամրջով, որը դարերն անգամ անզոր կլինեն մաշելու:

Իմ առջև ձգված է սպիտակ ու լայն ժապավենի պես մի հարթ ճանապարհ, որի ծայրը կոթչում է գյուղի մեջ: Անկասկած, իմ անսովոր հետաքրքրությունը, ուրախությունն ու ապրումները տարօրինակ թվացին Արմենուհուն և նա հարցրեց ինձ.

— Դուք անսլալման այս գյուղացի չեք:

— Սխալվում եք, օրիորդ, ես այս գյուղի նախկին պատանիներից եմ, հեռացել եմ քսանհինգ տարի առաջ, և ամենինչ եմ եկել իմ հայրենի գյուղը, չեմ եկել կարոտս առնելու, դրա համար էլ սիրտս լցված է մանկական ուրախությունով:

Ես այս խոսքերն ասացի այնպես հուզված, որ իմ աչքերում արցունքներ երևացին: Նա նկատեց այդ և երեսը դարձրեց թույլ տալով ինձ հույզերս կուլ տալու:

Մենք լուռ առաջ էինք գնում:

— Գյուղում դուք ազգականներ կամ բարեկամներ ունե՞ք, — հարցրեց նա մի փոքր ընդմիջումից հետո:

— Բարեկամ, հարազատ ընկեր, բոլորը, ամեն ինչ թողել եմ գյուղում և հեռացել, չգիտեմ կհանդիպեմ նրանց հիմա, թե ոչ:

— Եվ ես հիշատակեցի բարեկամներիս, հարազատներիս և ընկեր-
ներիս ազգանունները:

Նա պատմեց ինձ սև օրերին տեղի ունեցած ողբալի պատ-
մությունը. պատմեց ծերունիների մահը:

— Իսկ ձեր ընկերներից մի քանիսը կամավոր գնացին
ապամահատ՝ Հայրենական այս մեծ պատերազմի օրերին սուրբ
հայրենիքը պաշտպանելու: Նրանք թողորն էլ սպաներ են այժմ
և հիանալի ղեկավարների, Երկու գեներալ-մայոր ունենք, — հպար-
տությամբ ասաց նա և բաժանվելիս ավելացրեց. «Այս փողոցով
գնացեք ու կգտնեք ձեր հին տունը»: Ասաց և թաքնվեց ճյու-
ղավորված փողոցում:

* *
*

Գյուզղուճի եմ:

Հրապարակում կանգնած նայում եմ շուրջս: Անցնում են
անձանոթ գեմքեր, զննողաբար նայում են ինձ ու հեռանում:
Ես ջանում եմ ճանաչել նրանցից որևէ մեկին: Ոչ մեկին չեմ
հիշում: Արդյոք ես եմ փոխվել, որ նրանք չեն մոտենում ինձ,
թե՞ բոլորը խոսքները մեկ արած երես են դարձրել ինձանից, որ
ես քառորդ դար բացակայել եմ հայրենի գյուղից:

Գյուզղը փոխել է իր գեմքը: Սիրելի՛ս, այդ մասին ես կը-
գրեմ հաջորդ նամակներից մեկում: Այժմ անհրաժեշտ է մի ան-
կյուն որոնել: Տեղեկացա, որ հյուրանոց կա այստեղ: Հիանալի
է: Բայց ազատ տեղ չլինելու պատճառով նորից մնացի հրապա-
րակում կանգնած:

Ո՞ւր դնամ, ո՞ւմ մոտ իջնեմ: Նորից ու նորից եմ քրքրում
մտքիս ծալքերը: Չկա ու չկա: Ժամանակի փոշին շատ բան է ծած-
կել և մոռացության տվել, ափսոս... միթե կյանքի քսանհինգ
տարին կարող են այսքան փոփոխություն առաջացնել: Ի հարկե
ոչ... Մարդ արարածը երբեմն մոռանում է, որ ժամանակը կանգ
չի առնում և տարիքն ու թարմությունը չեն մնում, ուստի մո-
ռանում է օգտվել կյանքից: Որպես սլացող գնացքի ուղեվոր, քո
տոմսը քո ձեռքումն է և իջնելու կայարանը մոտ:

Ահա մեկը սպիտակ ու երկար միրուքով, փայտը ձեռքին,
հագնված քայլելով անցնում է մոտովս: Փառահեղ միրուքով այդ
մարդը նման է տարիների բեղմնավոր բուսան տակ կըված գիտ-
նականի: Բայց ո՞վ է նա, չեմ կարողանում վերհիշել... Ահա և

մի կին՝ կորացած մեջքով, այն հասակում, երբ մարդ գլխի-
կոր նայում է դեպի մայր-երկիրը: Ահա մի ուրիշ ծերունի-
60-ից անց, որը բազմության մեջ ինչ որ մեկին որոնում է: Նա
աշխույժ քայլերով մոտենում է ինձ և ակնոցները ուղղում և եր-
կար նայելուց հետո հարցնում:

— Այսօր եք եկել քաղաքից:

— Այո:

— Գնացքից իջնողներին մեջ մեր գյուղը եկողներ շատ
կային:

— Ո՛չ, Բացի ինձանից ոչ ոք չի եկել:

— Բայց իմ փնտրածը դուք չեք,—նա կրկին նայեց իմ
շուրջը:

— Ինչպես է ձեր անունը,—կրկին հարցրեց նա:

Ես հայտնեցի նրան իմ անունը:

— Ա՛յ տղա, մի՞թե դու ես, ինչքան ես փոխվել,—գոչեց
նա բարձր ձայնով և ամուր գրկելով համբույրներ ղրողմեց դեմ-
քիս,—ի՛նչը քաշեց քեզ մեր գյուղը:

— Հայրենիքի անգին կարոտը,—ջերմորեն պատասխանե-
ցի ես:

— Դեհ, էլ ուր ես կանգնել, գնանք մեր տուն:

— Իսկ դուք ո՞վ եք,—հետաքրքրությունից լարված հարցրե-
հս նրան:

— Ես Աշոտն եմ:

— Ո՞ր Աշոտը:

— Քո նախկին խնամին:

— Ա, բարե՛վ, հազա՛ր բարե՛վ—ամուր սեղմեցի նրա ձեռքը
ինչպե՛ս իմացար, որ ես եկել եմ:

— Արմենուհին ասաց:

Բարեսիրտ օրիորդ, հայրենի եղնիկ, ականա անցավ մլտ-
քովս:

2.

Սիրելի բնկերս.

Արդեն երրորդ օրն է, ինչ գտնվում եմ իմ ծննդավայրում,
Աշոտ Մելիք-Ասլանյանի տանը: Քեզ պետք է գրեմ մի դեպքի
մասին, որի սկիզբը եթե ոչ լիովին, գոնե թուուցիկ կերպով քեզ
պատմել եմ:

Այժմ ինձ հյուրընկալող Աշոտը ոչ հեռավոր բարեկամս է և գոհ է որ ինձ ընդունում է որպես հարազատի։ Աղնիվ մարդ է, հեռու ամեն տեսակի կեղծ ու պատիր ձեերից։

Երեկոյան նստած թեյ էինք խմում, երբ հանկարծ դուռը բխեցին։ Աշոտը դուրս գնաց սենյակից և քիչ անց վերադառնալով, հայտնեց որ եկողը Վանուշն է (Հովհաննեսը)։

— Ո՞ր Վանուշը։

— Զաքարյանը։

Մի առանձին ուրախություն զգացի Վանուշի անունը լսելիս։ Նա իմ մանկության քաղցր օրերի ընկերն է, որի հետ շարունակ կովել ենք, հաշտվել, խաղացել և նորից կովել։ Ի՞նչ քաղցր հուշեր։ Նա ներս եկավ ծանրությամբ իմ անունը տալով, ձեռքը մեկնեց ինձ։

— Հազար բարի իմ քաղցր ընկեր,— գոչեցի ես և տեղիցս ցատկելով սեղմեցի նրան իմ գրկի մեջ։— Ո՞րքան ես փոխվել։

Նա սեղանի վրա դրեց մրգով լի մի զամբյուղ, որը հյուսված էր ուռնեռ թարմ ճյուղերից։ Այժմ աղքատ ակնածանքով չեմ նայել ես «նվերի» վրա, մանավանդ մրգի, որոնցով հարուստ են մեր ազգիները։ Ինձ թվաց, որ այդ փոքրիկ զամբյուղի մեջ իմ և նրա սիրտն էր դրված մրգերի փոխարեն, որը ծածկված էր իրիկնային ցողով թրջված թարմ կանաչ տերեւներով։

Մենք երկար խոսեցինք, վաղուց անցած գնացած դեպքերը նորից վերակենդանացան մեր զրույցի մեջ, ես մտաբերեցի ինձ հետ պատահած մի դեպք, որը խորապես հուզեց ինձ, տալիս ու վրա արավ իմ հոգին։ Այդ չվրիպեց Աշոտի ուշադրությունից, նա անմիջապես փոխեց զրույցը։

— Հայ չկերար, Վանուշ, մոտ նստիր սեղանին, կարծես թե օտար լինես, ասաց նա, աշխատելով մոխիր լցնել և ծածկել այն կրակը, որը մեզանից անկախ էր առկայծել ...

Վանուշը իմ մանկության վաղեմի ու միշտ անդավաճան ընկերն է եղել... Բայց հիմա, քառորդ դար անց, մենք հանդիպում ենք մի սեղանի շուրջը, հանդիպում ենք ջերմ գրկախառնությամբ— սակայն բաժանվում ենք մի թաքուն ատելությամբ, որը նկատելի չէր կարող լինել անտեղյակ մարդու համար։

Իմ երիտասարդ հասակում ամուսնացել եմ հայրենի գյու-

ղում, գեղջկուհի Վարդիթերի հետ: Հեռանալով ծննդավայրից, ևս նրան ընդմիջտ հրաժեշտ տվի՝ թողնելով նորածին երեխայիս հետ, բոլորովին անհույս և անել վիճակում: Դրանից որոշ ժամանակ հետո—ահա, այս իմ մանկության ընկերը՝ Վանուշը ամուսնանում է նրա հետ: Խանդն իմ մեջ չէր կարող գեր խաղալ, որովհետև ես էի հրաժարվել կնոջիցս, և երբեք ցանկություն չեմ ունեցել հանդիպել նրան, կամ անգամ մտածել նրա մասին:

Երկար խոսեցինք մանկության օրերի արկածներից, վերհիշեցինք ամեն մի մանրամասնություն և կարծես թե տարիներ ընկած էր հետ-հետ գնացին և նորից ու նորից պատանի դարձանք...

Ուշ էր, Վանուշը ծանրությամբ բարձրացավ տեղից:

— Վաղը ես քեզ որտեղ հանդիպեմ, Վանուշ:

— Վաղը ես աշխատելու եմ «Քամու խաչ»-ում:

— Կգամ, անպայման կգամ:

Խոնարհ ընկերս գնաց, մենք էլ պառկեցինք քնելու: Ինչ ևս կարծում, իմ ընկեր, միթե ես կարող էի քնել: Ուղեղս բորբոքվել էր վառ պատկերներից ու քաղցր հուշերից: Պառկած վիճակում, մթության մեջ շարունակ մի հանդարտ ժպիտ էր խաղում իմ դեմքին: Ինչ ամեն ինչ մանկական երազ էր թվում, հեռու, միգապատ, բայց քաղցր ու հմայիչ: Ես ինձ կրկին մանուկ էի զգում:

* * *

Անհանգիստ քնից հետո ես արթնացա այն ժամանակ, երբ տեսցինք բոլորն էլ գործի էին գնացել: Նախաճաշելուց հետո՝ գյուղից դուրս եկա ու քայլերս ուղղեցի դեպի «Քամու խաչ» վոչված այգիները:

Այգիների ու պտղատու ծառերի մեջ դեռ կանգուն մնում էր հին եղեղեցին, որը իբր իբր սուրբ զորությամբ բուժում է քամի ունեցող հիվանդներին: Ահա այդ պատճառով էլ այդ այգիների վայրը կրում է «Քամու խաչ» անունը:

Արևը վաղուց էր ծագել և սկսել էր տաքացնել լեռնոտ աշխարհը, նրա գետերն ու ընդարձակ հովտի քաղցրապատու այգիները: Այստեղի մրդերն այնքան համեղ են, որ դժվար թե մի այլ երկրում նմանը լինի: Սիրելի՛ս, չկարծես թե ես չափազանցնում եմ և անտեղի գովում: Ո՛չ, ժխտագամայն ո՛չ: Ոսկեհատ ծիրա՛նը, մահուղյա դեղձը՝ թավշյա

Թո՛ւզը, բազմերանգ և բազմահամ խաղողը, մրգերի այդ թագուհին... այնքա՛ն համեղ, այնքա՛ն հյուսթալի, որ կարծես մեղր լինի։ Սխալված չեմ լինի, եթե տսեմ, որ այդ իսկ պատճառով գյուղը կրում է «Մեղրի» անունը։ Գնում եմ դեպի «Քամու խաչ»-ի այգիները. ճանապարհին ոչ մի անգործ մարդ։ Ծերպերից և քարքարոտ շավիղներից հաճախ ձիեր ու գրաստներ են հայտնվում՝ հսկայական կողովների տակ կքած, ծանրությունից ոտքերն ավելի արագ փոխելով, որպեսզի ժամ առաջ հասնեն պահածոների գործարանը և բեռնաթափ լինելով, մի պահ հանգիստ առնեն։ Խճուղու վրա լսվում է մեքենայի հռնգյունը, նըրանք նույնպես սլանում են և գործարանի ընդարձակ բակումը միայն գտնում իրենց հանգիստը։

Մենք երկուսը չէինք, այլ իննը հոգի միմյանց սերտ կապված ընկերներ։ Ա՛խ, ո՛ւր են հիմա նրանք։ Հիշո՞ւմ են միմյանց... Ցարական կարգերը և հողի պակասությունը ինձ և իմ ընկերներից շատերին ստիպեցին թողնել հայրենի հողը և գնալ բախտ որոնելու օտար երկնքի տակ, օտար հորիզոնի տակ։ Գընացողներից շատերը մահացան առանց հիշատակ թողնելու, ու մանք վերադարձան անառողջ և հաշմանդամ։ Իսկ նրանք, որոնք մնացել են գյուղում՝ հայրենական այս պատերազմի ակնկելու հենց առաջին օրից՝ գտնվում են ռազմաճակատում։ Ես շատ եմ լսել նրանց մասին, կարգացել եմ թերթերում, ամեն օր հետաքրքրվել եմ նրանց վիճակով։ Ի՞նչպես կարող եմ մոռանալ նրանց, իմ ընկերներին, որոնց հետ անց եմ կացրել կյանքիս այն քաղցր, անմոռանալի օրերը, որ կոչվում է մանկություն։ Բոլորս մեծացել ենք, դարձել ընտանիքի տեր, զավակների հայր, բայց խոստովանում եմ, նախանձում եմ նրանց, որոնք մարտնչում են ռազմաճակատում և պատմությունը ճարտացնում նորանոր հերոսություններով։ Նրանք այժմ հպարտ են իրենց կատարած գործերով, հպարտ են նրանց ընտանիքները, բարեկամները և ծանոթները, հպարտ է հայ ժողովուրդը, հպարտ է նաև ողջ Սովետական Միությունը։

Թողնելով խճուղու գալարապտույտ ժապավենը, դուրս եկա ճամբից և ձերպերի արանքով բռնեցի այն շավիղը, որը տասնում է դեպի «Քամու խաչ»-ի այգիները։

Աշնանային առաջին օրերն են, հասել են բոլոր մրգերը, և եթե ժամանակին չժողվես, նրանք կթափվեն ծառերից և կփչանան:

Աշխատանքը թափ առած առաջ է գնում: Աշխատում են ձերերն ու պատանիները, կանայք ու երեխաները: Աշխատում են լուսաբացից մինչև երեկո: Ոչ մի անգործ մարդ, ոչ մի դատարկ կողով ու զամբյուղ, ոչ մի ազատ փոխադրական միջոց: Եւ ու զեւ է ամեն տեղ, քաղցր մերգ, կիզիչ արև, անխոնջ մարդիկ:

Մի տեսակ անհարմար եմ զգում այգիներում պարապ թափառելու, թերևս ավելին, ես եկել եմ խանգարելու ոմանց, Բայց ո՞ւր է Վանուշը, ինչո՞ւ չի երևում: Մտիպված եղա մի քանի անգամ բարձրաձայն կանչել նրան, բայց դարձյալ չերևաց: Շրջեցի այգիներում, որոնեցի, փնտրեցի, չգտա: Հոգնեցի, որոշեցի վերադառնալ:

Պետք է շտապ տուն վերադառնալ, բայց... գայթակղությունս կատարյալ էր, երբ ճանապարհին դեմ առա մի հսկա թզենու, որը տեսնելուն պես բացականչեցի.— փառավորվե՛ս, մարդկային հոգի, այս բոլորը քո վայելքի համար է ստեղծել ընտրյալս: Մեկ վայրկյան հետո ես արդեն թզենու վրա էի մտնում ամառային, ինչպես պատանի հասակումս՝ քառորդ դար առաջ:

Ի՞նչ անց լսեցի կանանց խոսակցություն: Նայեցի ցած, նրանք արդեն գտնվում էին թզենու տակ... Ինչ խոսք, որ նրանք ինձ հատկապես նկատել էին և ես ամիսոսանքով ցած իջա ծառից, հայտնեցի իմ ով լինելը և այգի գալու նպատակը: Նրանք միջին տարիքի կանայք էին—տեղիս նշանավոր օղակավարները: Նրանցից մեկը դարձավ ինձ և ժպտալով ասաց.

— Վանուշը մեր բրիգադիրն է, ինձ խնդրեց քեզ հայտնեմ, որ նա վարի այգումն է և մի քիչ հետո մեր օղակավարունին կգա և ձեզ կառաջնորդի նրա մոտ:

— Շնորհակալ եմ, ուրախությունս կսպասեմ:

Հայտնվեց նաև այն ընկերուհին, որն ինձ պետք է ուղեկցեր Վանուշի մոտ: Նա անտարբեր նայեց ինձ և բարեկեց: Ես ճիշտ նույն տոնով պատասխանեցի նրան: Օղակա-

վարներից մեկը դարձացած նայեց մեզ և ասաց.

— Մթթե դուք չճանաչեցիր միմյանց:

— Ս, բարե... տվեց նա իմ անուշը:

Ես լսեցի մի ծանոթ և անուշ ձայն:

— Ա՛լա, Վարդիթեր, մթթե այդ դու ես, ինչպես ես փոխվել...

— Դուք նույնպես:

Սրբելի՛ ընկեր, չգիտեմ ինչո՞ւ «դուք» բառն ինձ խորթ թվաց: Զե՛ որ մենք մի ժամանակ ամուսիններ ենք եղել:

— Որտե՞ղ եք ապրում, — շարունակեց նա նույն մեղմու՜թ յամբ:

Թբիլիսիում:

— Ընտանիք ունե՞ք:

— Կին, երկու երեխա:

— Ինչո՞ւ եք եկել մեր գյուղը:

— Կարոտը, կարճատ... ծննդավայրիս կարոտն է ստիպել...

— Ուշ եք կարոտում... ու մտաբերում...

Նոր միայն նկատեցի, որ մենք մենակ էինք այգու մեջ, թզենու տակ: Կանայք զգուշորեն հեռացել էին, թողնելով մեզ միայնակ: Խեղացի քայլ:

— Հիշո՞ւմ ես, Վարդիթեր, թե ինչ ատելությամբ թողի տունն ու տեղը և այն երեխային, որը նոր էր լույս աշխարհ եկել:

— Ո՞ւր է մեր երեխան, — հանկարծ պոռթկացի ես, չգիտեմ ինչու, տարիներից հետո նժր միայն զարթնեց իմ մեջ հայրական սեր դեպի այդ երեխան, թե՞ մոր հանգիստ ու դուրեկան դեմքը բորբոքեց իմ մեջ հին զգացմունքներս:

— Տղա՞դ... տղադ մեծացավ ու գնաց ռազմաճակատ հայրենիքն ու քեզ պաշտպանելու, — ասաց նա՛ հեգնական ու թունոտ հայացքն ինձ հառելով: Ես գլուխս կախեցի, անկարող էի նայել նրա դեմքին, այնտեղ վերավոր սիրտն էր դրոշմված, այնտեղ խոր հանգիմանություն կար:

— Ինչո՞վ պահեի քո տղային, ոչինչ չթողեցիր. գնալուց հետո ոչ մի օժանդակություն ցույց չտվեցիր, նամակներիս անգամ չպատասխանեցիր: Ես մի անփորձ կին էի, հազիվ տասնյոթ տարեկան, ինքս էի խնամքի և դաստիարակության կարոտ: Բայց և այնպես ես նրան պահեցի ամբողջ չորս տարի: Ինչպիսի դժվարություններ քաշեցի, որքան չարչարվեցի, այդ միայն ինձ

է հայտնի: Կարիքը կարիքի հտեից, հոգսը հոգսի հտեից... աշխատել չէի կարող, երեսման դեռ փոքր էր, առանց աշխատանքի նույնպես անկարող էի գոյութիւնս պաշտպանել: Վանիկն այնքան զգայուն էր ու խելացի, որ նայում էր իմ արցունքոտ աչքերին և թախծոտ գեմքին և ինքն էլ արտասովում էր: Նա երբեմն հարցնում էր.

- Մայրի՛կ, բոլորը հայրիկ ունեն, ինչո՞ւ ես չունեմ:
- Ունես, բալիկ ջան, դու էլ ունես:
- Հապա մեր է, որ ունեմ:
- Օտար երկիր է գնացել:
- Ինչ՞ու գնաց:
- Նա խռովեց մեզանից, բալիկ ջան, ու գնաց:
- Էլ բոլորովին չի՞ դալու մեզ մոտ:
- Չգիտեմ.—ասում էի նրան:
- Մենք էլ գնանք նրա մոտ, մայրի՛կ:
- Դո հայրիկը ինձ չի սիրում, նա մեզ չի ընդունի:

Այստեղ Վարդիթերը մի խոր հոգոյց հանեց, կոտրված «բառով ծանր մի «ախ» քաշեց: Այդ հոգոյցի մեջ զգացի այն բույր ծանրութիւնը և դժարութիւնը, վերքերն ու զրկանքները, որ նա կրել էր այն տարիներին: Ինքս նսեմացա իմ աչքում:

— Ի՞նչ հիմարն եմ եղել: Հետո՞, — հուզված հարցրի ես:

— Հետո այն, որ նա մահացավ սովից: Մի քանի օր միայն պառկեց: Ամբողջ ժամանակ նա շարունակ կրկնում էր — «գնանք հայրիկի մոտ, գնանք հայրիկի մոտ...»: Եվ մի առավոտ նա այլևս ոչինչ չասա՛ց...»: Նրա սիրտն արդեն գիշերն էր դադարել, նրա շրթունքներին սառել էր երեք բառ՝ «գնանք հայրիկի մոտ...»:

Ես այլևս չէի լսում նրա խոսքերը, աչքերս լցվեցին արցունքով, խեղդվում էի... սկսեցի լալ որպես երեխա: Չգիտեմ, ինձ թվաց, թե մեկն ասաց ինձ, թե մի խուլ ձայն իմ ներքին աշխարհից կշտամբում է ինձ՝ «տանջվի՛ր, դա դեռ քիչ է քեզ...»: Ես արտասովում էի անդադար, արտասովում անվերադարձ կորստի համար: Ձգում էի, որ իմ պատճառով այնքան խելոք ու զգայուն երեսային ժամանակից շատ շուտ գրկեց սառը շիրիմը: Խեղճ երեխա: Ես արտասովում էի... Չեմ հիշում ինչքան ժամանակ այդպիս ֆնացի՝ գլուխս ձեռքերիս մեջ:

Երբ ուշքի եկա, գլուխս վեր բարձրացրի, արդեն Վարդի-

թերը չկար: Շուրջս իրիկվա աղջամուղջն էր իջել, այգին բոլորովին դատարկ էր, միայն մեղմ քամին էր սվսվում ծանրացած ճյուղերի արանքում:

Մի խակ թուզ ընկավ ուղիղ ձեռքիս մեջ: Կարծես թե այդ բանը դիտմամբ արվեց, ինձ առավել ևս տանջելու համար: Այդ այդ խակ թուզն իմ սիրելի Վանիկն էր: Ահա և քամին մի ճյուղից ոսկեփայլ տերև պոկեց... Աստված իմ, նա ճոճվեց, ճոճվեց և ապա նստեց իմ ուսին:

Որքան նման էր սա իմ կյանքին...

3.

Սիրելի ընկեր:

Ես խոստացա դրել քեզ ներկա գյուղի մասին, նկարագրել նրա կրած փոփոխությունը որ քաջ գիտեմ, քեզ նույնպես հետաքրքրում է: Մենք ապրել ենք քաղաքներում և շատ քիչ տեղեկություն ունենք մեր հայրենի գյուղի մասին (խոսքը ինձ և քեզ է վերաբերում): Ձե՞ որ բոլոր դարերում գյուղն է՝ իր քրտինքով քարից ու հողից հաց քամել և քաղաք ուղարկել: Դյուզն է որ թեթևացնում է կյանքը, էժանացնում, հեշտացնում կամ դժվարացնում, մանավանդ պատերազմի օրերին: Երբ անցնում ևս գյուղերով ու դաշտերով, ականատես ես լինում նրա աշխատանքային թափին, հոգեկան մեծ բավակալություն ևս զգում և հավատում ևս, որ դժվար օրերը շուտով, շուտով կանցնեն և երկիրը կապրի նույն լիառատ կյանքով, ինչ որ մի քանի տարի առաջ էր: Առաջներում հողի մշակողին հիվ էր ուշադրություն դարձնում: Ամենաընտիր մրգերն ու գինիները խում—տանում էին, քրտինք թափողին ոչ մի ուշադրություն չէին դարձնում: Հիմա ուրիշ է, բազմաթիվ գյուղացիների կրծքերը զարդարված են շքանշաններով ու մեդալներով, նրանց հետ հաշվի են նստում, ժողովներ ու խորհրդակցություններ գումարում, մայրաքաղաք կանչում, պատվում, մեծարում ու փառավոր ճանապարհ դնում:

Առաջներում ^սվ կերպեր այսպիսի բան: Բաղնիք, հյուրանոց, թատրոն, կինո, ընթերցարան, գրադարան, ակումբներ: Այդ բոլորը այստեղ կա և Մեղրին վաղուց դարձել է մի քանի տասնյակ գյուղերի կենտրոն:

Ահա կանգնած եմ գյուղի հրապարակում և նայում եմ շուրջը: Մեղրին փոխել է իր դեմքը, դարձել է անճանաչելի: Եթե չլինեն մի քանի դարավոր վկաներ՝ չինարիները, դժվար թե ինձ նման մի քսանհինգ տարի բացակայած մարդը կարողանա ճանաչել իր հայրենի գյուղը: Այս չինարիների գլխով դարեր են անցել: Այս չինարիները կանգուն են եղել դեռ պարսիկների տիրապետութայն ժամանակ: Ասում են Արզուլախանը մեջքը դեմ տված չինարին, մորուքը շոյելով մտածում էր, ^սվ դեռ ես, որ հայի գեղեցիկ աղջկա մասին, երբ հանկարծ լուր են բերում վեզիրները, թե ջանֆիդա հայերի մի քանի խումբ շրջապատել են Մեղրին:

Եթե լեզու ունենային այս դարավոր ծառերը, շատ և շատ քան կպատմեին մեզ Մեղրու անցյալ պատմությունից և քաջերից, բայց այդ մասին ես կպատմեմ մի այլ անգամ, մի այլ աշխատություն մեջ, որը ձեռնարկում եմ: Մեղրին շատ և շատ է պայծառել...

Նորաշեն տներից քիչ հեռու կանգնած է մի այլ դարավոր պատմիչ ևս, դա վաղածանոթ եկեղեցին է, որը գլուխ է խոնարհել նոր կառուցված շենքերի առջև և համեստորեն պատմում է իր այցելուների անդարձ անցած դեմքերի, արցունքների ու անեծքների մասին: Ա՛խ, մեր անբախտ պապեր ու տատեր, որքան եք դուք մաշել այս եկեղեցու շեմքը, ջերմեռանդ աղոթել, աղերսել աստծուն երջանիկ ու խաղաղ կյանք և անդրգներիդմանի սպասելիքներ...

Եթե կարողանային վեր կենալ մշտնջենական քնից, նրանք կըլիոթվեին:



Գյուղի հրապարակից քայլերս ուղղում եմ դեպի այն-գերեզմանոցը, որտեղ թաղված են մեր նախահայրերն ու պապերը, որը քտնվում էր գյուղից հեռու մի ամալի դաշտում: Այժմ այնտեղ քարձրանում է մի ավան, մի փոքրիկ քաղաք. դա պահածոների

դործարանն է, որն իր անունն օրեց-օր հայտնի է դարձնում աշխարհին:

Հսկա մեքենաները շունչ առած, հազարավոր ոտք ու ձեռքով, հազարավոր սիրտ ու թոքով ճշում են, դռնում, պահանջում, դուռնացնում, հանդիմանում, բարկանում, ապա հրճվում ու քրքջում: Ձթուկացենք մեքենաների թափը, ալնիլ մեղրեցիկներ, պատերազմը դեռ չի ավարտված, թշնամին դեռ վերջնականապես չի ջախջախված, դեռ մեր ոտնատակ հղած երկրամասերը ձեք օգնության կարոտն են քաշում... Զնգում են առևտրի, վազում են առաջ, նրանք շտապում են, ժամանակ չունեն, նրանք պարտավոր են, խոսք են տվել ժամանակին հասնել տուժած ընտանիքներին...

Ես հպարտ եմ, որ այս լեռնաշխարհի քաղցր օդն եմ ծծել, նրա հյութով սնվել—մեծացել: Այո—ես հպարտ եմ, որ մեղրեցիկ եմ:

*
* *

Կանգնել եմ գյուղի հին աղբյուրի մոտ ու դաքմանում: Զե՛ որ առաջներում ջրի հերթեր էին լինում, կիտված ամբողջ ճշոց-ջարդոց, հայհոյանք և թուք... Քանի քանի անգամ մայրս սափորը ձեռքին ժամեր է կորցրել, թանկարժեք ժամեր, մինչև որ ծեծված ու ջարդված, մի քիչ ջուր է բերել: Ո՛ւր է այժմ ջրի հերթը: Հիմա նախկին այդ աղբյուրի փոխարեն բաղմաթիվ ծորակներ են տնկվել փողոցների հարմար տեղերում և առնորակ ջուր է ժայթքում անխոնջ կոկորդից գիշեր ու ցերեկ: Ո՛ւր է այժմ ջրի հերթը... Միակ հին աղբյուրը կարծես դժգոհ է, որ այցելուների թիվը պակասել է: Նրան թվում է, թե մարդիկ խռովել են իրենից, նա արտասվում է, անիծելով իր բախտը... Ես նույնպես անիծում եմ իմ բախտը, քանի որ հենց այս աղբյուրի մոտ է մահացել մայրս—դեռ բոլորովին երիտասարդ հասակում:

Աղբյու՛ր, աղբյու՛ր, ասա, խոսիր, պատմիր ինձ իմ մոր մասին, նա հաճախ է եկել քեզանից ջուր տանելու, դու նրան տեսել ես շարունակ, փափագում եմ գեթ նրա դեմքը հիշեցույց տուր: Նրա նկարը քո վճիտ ջրերում, ու պատմիր նրա մասին, սիրտս կարոտ է մայրական գգվանքի...



Մանկական մի զգացմունք պատեց ինձ և թվաց, թե ես երեսուն տարի առաջվա փոքրիկ տղան եմ և ցանկացա թռչկոտելով վազել տուն և փարվել ամուսնուց շուտ զրկված վշտահար մորս:

Ահա իրոք ես կանգնած եմ մեր հին տան առջև, որը դեռ էա իր կտրացած մեջքով: Խեղճ տուն, կարծես թե որդեկորույթ ծնող լինի... Սիրտս կծկվում է կրծքիս տակ, արտասույթը մի զգացմունք է պատում ինձ:

— Բարե՛վ, իմ տուն պապական, իմ պապերի ու տատերի հին քունջ ու պուճախ, հս վերջապես եկա, բաց քո գիրկը: Ալեկոծ հուզմունքը խռովել է սիրտս ու հոգիս: Ներս մտա: Դեռ կանգնած է այն հաստ սյուներ, որն իր վրա է պահում հսկայական առաստաղի ծանրությունը, դեռ նույն տեղումն է փայտյա ահագին ամբարը՝ կոպիտ ու անարվեստ, դեռ նույնությամբ կախված է առաստաղից այն մեծ տաշտը, որի մեջ պահվում էր երեք ամսվա համար չորացրած լավաշ հացը: Դեռ ողջ է բնկույզի փայտից պատրաստված սեղանը, որի վրա ճաշել են իմ նախնիները... Ահա այն օրորոցը, նորածին մանկան առաջին աշխարհը, որի մեջ օրորվել են իմ ծնողները, մեր ընտանիքի անդամները և ես և... այն մանուկը, իմ բալին, որը հագլիվ չորս տարի ապրեց իր ապերախտ հոր պատճառով, դրսի աշխարհը ճանաչեց միայն դռան ճեղքերից: Թոթովեց իր մանկական քաղցր բերանով, ծիծեռնակի պես և համբերությամբ սպասեց լուսածեղից մինչև երեկո, որ մայրը աշխատանքից վերադառնա: Մի փոքր հացի կտորով: Խեղճ իմ մանկիկ, դու ավելի զգայուն ես եղել դեպի քո հայրը, քան նա դեպի քեզ: Դու փափագել ես հորդ մոտ մնալ և կարոտից «հայրիկ» կանչելով շունչդ ես փչել քաղցից... Ես իրավունք չունեմ ապրելու, իրավունք չունեմ այս շնմբը ոտք դնելու...

Վիշաղ, վիշաղ կրծում է հոգիս, նա դարձել է իմ անբաժան ընկերը, նա պետք է ուղեկցի ինձ մինչև սև օրերիս վերջը, մինչև գերեզման: Ես անկարող եմ հրաժարվել նրանից, անկարող եմ փախչել...

Մի օր ես խնդրեցի Վարդիթերին՝ ցույց տալ ինձ այն դերեզմանը, որտեղ հանգչում է մեր երկուսի զավակը: Նա առաջնորդեց ինձ դեպի «Շեն-ձյուրի» գերեզմանատունը: Ես խորապուշված եմ տանջող մտքերի մեջ: Երկուսս էլ լուռ էինք և գնում էինք կողք-կողքի և հազիվ թե ավելի զորեղ պատճառ լիներ այդ լուռթյունը խղելու համար: Ես ամոթով քայլում էի նրա կողքով և զգում էի, որ նա խղճում է ինձ: Բայց միթե ես արժանի եմ, որ ինձ խղճան կամ ներեն, եթե ամբողջ աշխարհն էլ ների, ես ինձ չեմ ների: Ես եմ սպանել նրան, մատնելով քաղցի ձեռքը: Սարսափով լցվում է հոգիս, և ես սկսում եմ ինքս ինձ ատել:

Մենք կանգնեցինք մի անշուք գերեզմանի առջև: Նա լուռ նայեց իմ աչքերին, դա Վանիկի գերեզմանն էր, որի հողաթումբի վրա խոտ էր բուսել, նորածիլ խոտ, որը թառամիլ էր և չորացել... Վաղաժամ աշուն... Ես խնդրեցի Վարդիթերին, որ ինձ մենակ թողնի: Նա ցատկոտ լի հեղնական մի հայացք գցեց վրաս և հեռացավ: Ես հավասարակշռութունս կորցրի, կարծես գտնվում էի մի փոթորկվող ծովի վրա, ձեռքիս ծաղկեփունջը վայր ընկավ, հնացած մի կոճղի նման վայր ընկա նաև ես: Հեծկլտանքս պոռթկաց հրաբխի պես:

«Բալիկս, քո մոլորված հայրը երկար տարիներ թափառելուց հետո եկել է հայրենիք, քեզ դրկելու, համբուրելու և քափելու իր մեղքերը, նա եկել է քեզանից ներում խնդրելու, ինչպե՞ս, ինչպե՞ս չես տարածում թաթիկներդ դեպի ինձ, ինչպե՞ս ձայն չես հանում, ողբացյալ բալիկ...»

Ա՛խ, սիրելի՛ ընկեր, կարծում էի, թե հայրենիք գալս ինձ երջանկությալն կպատճառի, բայց ինչպես տեսնում ես, խոր վիշտն է նստել իմ սրտում և նա ստվերի պես հետևում է ինձ, կպած իմ փեշերից... Այլևս միտք չունի իմ կյանքը, քանի որ բախտի բանալին ես արդեն վաղուց կորցրել եմ... Իմ տղան սովամահ է եղել իմ անտարբերության հետևանքով, նա զուրկ է մնացել ամեն բանից: Քանի-քանի անգամ նա առաջարկել է գնալ հայրիկի մոտ, իսկ ես... է՛, սիրելիս, այդ բոլորը բացատրվում է նրանով, որ ես ժամանակին եղել եմ տգետ ու անտաշ:

Հեռացա հողակույտից շատ ծանր տգավորությամբ և տուն

հասնելուն պես որոշեցի գրել քեզ... Բայց նամակը չեմ կարողա-
նում շարունակել, որովհետև դիմացի տան պատշգամբից լավում
է մի տխուր երգ: Լաց լինողը կինն է, որը մի վերարկու և գըլ-
խարկ առջև դրած՝ համբուրում է և ողբում: Երգի բառերը քիչ
եմ հասկանում, որովհետև այն աղբրեջաներին է, բայց պարզ
ստում եմ սրտամորմոք ծնողի անեծքները՝ ներխուժած թըշ-
նամու գլխավոր հրահրողին: Նա լալիս և ողբում էր զոհված
աղայի համար: Փառք քեզ ծնող, որ ռազմիկ ես անցերել հայրե-
նիքի համար, դու կարող ես պարծինալ դրանով, երկիրը չի մո-
ռանա ոչ քեզ և ոչ էլ քո զավակին. դու պետք է զուլադ միշտ
քարձր ու հպարտ պահես:

Իսկ ես...

*
* *

Խնկակորույս փախչում եմ տանից, բայց թե ուր, չգիտեր...
Վերկար թափառելուց հետո կանգ առա ժայռի կատարին, նայեցի
շուրջս, նոր միայն խոր և լիաթոք շնչեցի: Բնությո՞ւն, դեռ դու
ավելի գորեղ ես քան մարդը: Ոչ սեկը չի կարող այնպես թե-
թեվացնել ու մեղմացնել մարդկային բոլոր տեսակի հույզերն ու
վշտերը, ինչպես բնությունը: Ահա նրանք, մեր «Շեն-ձյուրի»
հարազատ լեռներն ու ձորերը: Մխիթարություն եմ որոնում նը-
քանց մեջ, վերքերիս սպիղանի...

Անզարդ, լերկ ժայռեր, ես տեսա ձեզ նորից, դուք նույնն
էք, ինչպես իմ մանկության օրերին, բուժեցեք ինձ, իմ հոգին,
վարդա եմ ձեր օգնության...

Զգում եմ, որ այդ ժայռերն էլ ունեն մի ծանր վիշտ և չե-
կարողանում ազատվել նրանից: Ավանդությունն ասում է, որ
դարեր առաջ այս վայրերը ծածկված են եղել շքեղազարդ այ-
գիներով, բյուրեղահոս աղբյուրներով ու դալալոդ հավքերով:
Այն դոյակը, որը խոյանում է այդ վայրի կենտրոնում,
պատկանում էր մի դաժան իշխանի: Զի հիշվում, թե նրա ինչ
չարագործության կամ մեղքի համար մի զարհուրելի օր, գար-
նան տեղատարափ անձրևի հետ քարե կարկուտ է թափվում և
հիմնովին կործանում դոյակն ու ամրոցները: Մի հայացք եմ նե-
սում դեպի ամբողջ ձորի երկայնքը, նրա խորությունը, կիրճերը,

անցքերը, այրերը, բացվածքները, լանջերը, հեռավոր այգիները և կամաց-կամաց փարատվում է վիշտի հայրենի երկրի բնության կարոտի առնելուց հետո: Հաստահիմն ու լայնանիստ բլուրներն իրենցից վեր պահում են լեռների մի շարան, նըրանցից բարձր կրկին ու կրկին դեպի վեր են խոյանում նորանոր լեռների սրածայր սեպեր, դեպի անհունության կոպուլտ շերտերը, իսկ ներքևում, անդնդախոր ձորերն իրենց կախարդական վայրերով տարածվում են հեռու, շատ հեռու...

Սքանչելի հայրենի լեռնաշխարհ...

Յած իջա, թողի կախարդական լեռներն ու ձորերը, իջա դեպի այգիները: Բնության հետ ներդաշնակ, ծառերի արանքից լսեցի մի քաղցր ձայն, այն ինձ էր կանչում, իմ անունն էր տալիս: Շուռ եկա դեպի ձայնը և չկարողացա հիացմունքս զսպել: Այնքան համաչափ, այնքան միաձուլվ կանգնած էին երկու հողի այգիներից մեկում, որ միայն սրատես մարդ կարող է զոնազանել նրանց: Երկրի օրինական տերերն են նրանք, բնության ամենազեղեցիկ դարդերը: Դեպի ինձ էին գալիս Արմենուհին և զինվորական զգեստով մի մարդ՝ վերավոր թևը կրծքին կապած: Արմենունուն նայելիս մարդ ափամահ հիասնում է և միևնույն ժամանակ բողոքում է բնության դեմ, որ կերտելով նրան արվեստի բոլոր սկզբունքներով՝ տվել է նրան խոր հույզեր, վիշտ և տանջանք, նյութել աղետներ, մահ: Մարդ արարածը պետք է անմահ լիներ, հավիտենական...

Մոտեցան:

— Բարե, Բարե՛ն ջան,— ճանաչելով նրան հաղիվ կարողացա բացականչել՝ լեռնային արծիվ... Նա ինձ թույլ տվեց գրկել իրեն և ձախ ձեռքը բռնելով շարժվեցինք դեպի ցած, դեպի մեղրածոր այգիները:


Հաճելի լուծթյուն տիրեց: Մենք անցանք շավիղներով: Նայույց տվեց մի հաստաբուն ծառ.

— Հիշում ես:

— Ինչպես չհիշեմ, այդ այն վայրն է, ուր Բարեկենի մոր եղբայրը, քեռին՝ Դարեգինը տարիներ առաջ հանդիպել է մի վագրի:

և մենամարտի բռնվելով նրա հետ, քաջաբար գետին տապալել
ներան։ Այդ դեպքը փառք բերեց մեր գյուղին և անվահերության
ոգով գաստիարակեց մեր երիտասարդությանը։ Անվահերությանը
մեծ դեր խաղաց այս մեծ պատերազմում։ Ահա այդ ոգով գաստիա-
րակված սերնդի ներկայացուցիչներից մեկը, ինքը Բաբկենը, ո-
րին իրավամբ արժիվ են անվանում, մի կոչում, որը նույնքան
բարձր է, որքան նրա հայրենիքի այս լեռները։

Մեղրի 1943 թ.



ԼԵՌՆԱՅԻՆ ՕՐԵՆՔ

(Դառն հուշեր)

Ճեպընթաց գնացքի վագոններից մեկումն եմ: Անձնակա-
գործով Մոսկվա եմ գնում: Նստած ներքևի նստարանին, նայում
եմ հեռու, աշնանային թանձր մառախուղի միջով հազիվ նշմար-
վող լեռներին և գնացքից անմիջապես մինչև լեռները ձգվող
գորշ, ավազոտ հարթությանը:

Աչքիս առջևից, որպես մտածողության միակար թելեր,
անցնում են հեռագրալարերը: Նրանց սյուներն էլ, ինչպես մա-
կույկների կայմեր, բարձրանում և իջնում էին անվերջ:

Մաղվում էր անձրևը. երկինքը կարծես լալիս էր մեռնող
բնության վրա:


— Տոմսերը պատրաստե՛ք—լսվեց վերահսկչի հետ ներս
մտնող կոնդուկտորի ձայնը: Նրանք տոմսերը ստուգելով մոտե-
ցան մեզ:

— Ասացե՛ք խնդրեմ, ո՞րն է հաջորդ կայարանը.—հարցրե-
ես վերահսկչին, միաժամանակ մեկնելով նրան իմ տոմսը:

— Բաքուն է—սառն ու կտրուկ պատասխանեց վերահսկի-
չը, շարունակելով իր գործը:

Նրանք առաջ անցան: Դարձյալ միայնակ ուղևորներին
հատուկ նույն տխուր և տաղտկալի դրությունը: Մտքերով տար-
ված, նորից հայացքս շրջեցի և շարունակեցի նայել պատուհա-
նից դուրս:

Գնացքն աստիճանաբար դանդաղեցրեց իր ընթացքը,
փոքր ինչ տարուբերվելով ցնցվեց, բոլորովին կանգ առավ և
թշնալով երկու կողմից բաց թողեց գոլորշին: Բաքվի կայա-
րանն էր:



Պատուհանից ոչ հեռու մայթի վրա, նոսր ըաղմության մեջ իմ ուշադրությունը գրավեցին մի մարդ և մի կին, որոնք գրեթե նացքը գալու ըոպեին մի պահ կանգ առան, ընդհանուր հայացք ձգեցին գնացքի վրա և շարունակեցին ձեմել:

Կանգնած տեղից ես ակամա սկսեցի աչքերով ուղեկցել նրանց: Տղամարդը բռնադրոսիկ քաղաքավարությամբ, ձեռների ալ գլխի ջրային շարժումով ինչ որ բան էր պատմում, երբեմն հեռանալով խոսակցուհուց մի ամբողջ քայլ և խախտելով ընդհանուրի քայլվածքի համաչափությունը: Նկատելի էր, թե ինչպես Վինը քաղաքավարությունից դժգոհ, փոքր ինչ կեղծ բավակա-նության ժպիտը դեմքին, ի նշան հավանության, գլխի շար-ժումներով ուղղում էր ցույց տալ յուր խոսակցին, որ իբր նրա խոսակցության նյութը հետաքրքրական է:

Գեղանի կնոջ հասակն ու նրա համաչափ քայլվածքը բե-վեռեցին իմ ուշադրությունը նրա վրա: Այդ հաճելի տպավորու-թյան տակ ինձ համար ևս աննկատելի կերպով բաց արի պա-տուհանը և շարունակեցի դիտել նրան:

Այժմ ես լսում էի տղամարդու ձայնը, սա խոսում էր ադրբեջաներեն: Ադրբեջանցու խոշոր կրակոտ աչքերը ու նուրբ ճիւղավոր, կանացի գեղեցիկ կազմվածքը, յուր վսեմ շարժում-ներով, հիշեցրին ինձ հունական և հռոմեական անտիկ կնոջ տիպը, որպիսին ես տեսել էի միայն նկարներում: Սակայն նա ուներ ուրիշ գծեր ևս, որոնք ավելի հարազատ են և դուրեկան մեզ՝ Կովկասցիներին համար:

Մի վայրկյան իմ առաջ պատկերացավ նախասովետական ժամանակվա ադրբեջանացու դեմքն ու վիճակը.— «Մի՞թե անց-յալ տասնհինգ տարվա ընթացքում, ադրբեջանցի կինը գեն ձգելով իր դեմքը ծածկող դարավոր շղարշը ու օգտվելով հոկ-տեմբերյան ռեուլցիայի նվաճումներից, արդեն տնօրինում է իր բախան ու ճակատագիրը, զգալով իրեն սոցիալիստական մեծ հայրենիքի հավասար անդամը», — մտածում էի ես:

Իմ հասակակիցներից անցյալում ռվ կարող էր պատկերաց-նել ադրբեջանցի կնոջը այնպես, ինչպես տեսնում եմ այժմ նրանց ես՝ վագոնի պատուհանից կառամատույցի վրա ձեմելիս և մանավանդ նրան, որը հատկապես գրավել էր իմ ուշադրու-թյունը:

Այժ, մեր օրերի հասարակական փոխարարերություններ

մեջ մարդս իր ամբողջ էությամբ ձևավորվում է այնպես, արագոր
որ անցյալի սև օրերը թվում են երազ:

Միմյանց հաջորդող պատկերները կտրեցին խոհերիս թե լը
երբ ես տեսա թե ինչպես այդ մարդն ու կինը մոտեցան կայա-
րանի դահլիճի դռանը և բարձրաձայն ծիծաղելով ներս մտան:

Մի քանի վայրկյան նրանց կանգնած տեղում, ասես օղի-
մեջ, տակավին մնում էր այդ կնոջ պատկերը: Ազդարար զանգի
ձայնը և մեր վազոնը ներս մտնող նոր ուղևորների աշխույժ ու
աղմկալից խոսակցությունը սթափեցրին ինձ:

Ձեռքերս զրպանումս մեքենայաբար շուռ գալով, տեսա որ
նախկին ուղեկիցներն այլևս չկան: Նրանց փոխարեն ներս էին
մտել ուրիշները:

Նոր ուղեկիցներիցս մեկը առույգ, ժպտադեմ, ալիզաբդ մո-
րուքով ու հաստատուն շարժումներով ծերունի էր: Իմ ետ նա-
յելու բոպին նա մի հայացք ձգեց վրաս, ոտքից գլուխ զննեց
ինձ, երևի ցանկանալով պարզել իմ տրամադրությունը, կապ-
ված նոր ուղևորների ներս մտնելու հետ: Նրա դեմքին ես կար-
գացի՝ «Ննդերմ չվրդովեք, մենք վատ ուղեկիցներ չենք»:

Ես ընդունելով նրա լուռ հայտարարությունը, նստեցի իմ
տեղը և շարունակեցի պատուհանից նայել դուրս: Ազդարար
զանգին հետևեց գլխավոր կոնդուկտորի սուլոցը, ապա շոգեշարժի
հատու և որոշակի կանչը, որից հետո անմիջապես ես նկատեցի
թե ինչպես զանգադրեն իմ աչքի առջևով սահում—անցնում են
կայարանի պատուհանները, սյուների ու կայարանամերձ տների
պատշգամբներում դրված թաղարների մեջ աճած արևադարձա-
յին ծաղիկներն ու բույսերը: Տեսա թե ինչպես մի քանի տասն-
յակ մարդիկ կառավարություն կանգնած, հայացքով ուղեկցում
էին շարժվող գնացքը: Նրանցից մի քանիսը ձեռների շարժում-
ներով բարի ձանապարհ էին մաղթում իրենց հաջողատներին,
բարեկամներին ու ծանոթներին:

Մի անգամ ես իմ աչքի առջև ծառացավ փոքր ինչ առաջ
հանդիպած կնոջ անզուգական դեմքը...

Գնացքը հեռզհեռե արագացնում էր իր ընթացքը, սխանում
էր առաջ, յուր ետևը թողնելով թե կառավարություն՝ իր ժխորով
և թե կայարանամերձ տներն՝ իրենց ծաղիկներով: Գնացքի վա-
զոններից լավող խոսակցությունն ու երգի ձայները միախառնվե-

լով գնացքի գորգյունին և շոգեշարժի հեւքին, ստեղծել էին յուրօրինակ մի համերգ:

Շուտով իմ առջև բացվեց մի ընդարձակ ավազուտ հարթություն, որի միապաղաղությունը խախտվում էր այս ու այն կողմ ձգված թմբերով ու չոր խոտաբույսերով: Ճանապարհի այդ անշուք պատկերը վազուց տաղտկալի էր դարձել ինձ համար, այդ իսկ պատճառով շուտ եկա, որ խոսակցութեան մեջ մտնեմ իմ նոր ուղեկիցներին հետ:



Իմ բոլոր հարցերին ժպտադեմ արեգարդ ծերունին պատասխանում էր բավականութեամբ: Իմ յուրաքանչյուր հարցին պատասխանելիս նա իր մտքերը լրացնում էր դանազան կողմնակի տեղեկություններով, որոնք անմիջական կապ չունեին հարցերիս հետ:

Մի քանի րոպե լռելուց հետո ծերունին պատուհանից դուրս նայեց և խորհրդավոր կերպով օրորեց գլուխը: Նայելով նրա հետզհետե մոռյլվող դեմքին և գլխի խորհրդավոր շարժումներին, դժվար չէր կռահել, որ նա գտնվում է դառն հիշողությունների ազդեցութեան տակ:

Շուտով մեր գնացքի պատուհանից կապտավուն մշուշի մեջ նկատելի դարձան Դաղստանի սլացիկ, երկնահուպ լեռներն ու նրանց փեշերին թառած ցածլիկ տները, որոնց երդիկներից մարմանդ վեր գալարվող ծուխն ապացույց էր, որ նրանց մեջ խլրտում է կյանքը:

Ծերունին շոյելով իր մորուքը և խոր թառանչ քաշելով՝ ասաց.— «Այ՛, դառն էին անցած օրերը»:

Երբ ես սկսեցի հետաքրքրվել նրա հիշողություններով, նա համաձայնեց պատմել ինձ իր երիտասարդական կյանքի արկածներից մեկը, որ կապված էր հենց այդ նույն վայրերի հետ, որտեղով սլանում էր մեր գնացքը:

— «Այն ժամանակ ես դեռ պատանի էի, հազիվ 18 տարեկան» — սկսեց ծերունին, ձեռների իրար հենված մատներին մեջ առնելով ծալված աջ ոտքի ծունկը.— «հիշում եմ, թե ինչպես ժիր հայրս տնից մինչև գետափ ուղեկցելով վերջին անգամ յուր սառն շրթունքներով համբուրեց իմ ճակատը և օգնեց ջորի

նստել: Նա բարի երթ մաղթեց ինձ պանդխտութեան իմ անհայտ ճամբին, հորդորելով աշխատանք անել ու օգնել մեր բաղմանդամ ընտանիքին:

— «Դռնադ կա՛ց ու աչքաբայ, բալն», --ասաց նա ինձ: Ես մտասուելով ու ջրակալած աչքերով նայեցի նրա դեմքին: Կողմնակի մեկը դժվարութեամբ կորոշեւ, այդ դեմքը ժպտում էր, թե արտասովում: Բայց ինձ վաղուց արդեն ծանոթ էր նրա խոսակցութեան շեշտը, կապված նրա ներքին ապրումների հետ: Ես նկատեցի, թե ինչպես նրա արտասովակալած աչքերից երկու խոշոր կաթիլներ գլորվեցին գեպի ցած և նրա փոշեպատ ճերմակ կրծքին թողին իրենց հետքերը:

Ձգացի թե ինչպես նա իր հուզվածքն ու արցունքը ինձնից ծածկելու համար կռացավ ու գետափի թփերից պոկեց մի ձիպոտ և դրանով երկու անգամ հարվածեց ջրուն: Վերջինս ծուլ ելավ, շարժվեց առաջ ինձ հետ գյուղից հեռացողներին, բռնված ջորիների ու ձիերի ետևից:

Ես մի անգամ էլ ետ նայեցի... ամառային երեկոն մարում էր արդեն, աղջամուղջի մեջ ես տեսնում էի կորացած հորա: Նա մի քանի վայրկյան ուղեկցեց ինձ հայացքով, ապա շուռ եկավ և դողդոջուն քայլերով շարժվեց դեպի տուն: Արագընթաց գետակի միակար խշռոյի հետ հեռվից լսվում էր գյուղի եկեղեցու զանգերի մեկամղձոտ դողանքը, որը երեկոյան ազդեցի էր հրավիրում հավատացյալներին:

Ես դարձյալ ետ նայեցի. հետզհետե իջնում էր կապտավուն շամանդաղը, գետի մյուս կողմում լեռան լանջին թառած տներն իրենց տափակ կտուրներով և սպիտակ պատշգամբներով մեկ առմեկ չքանում էին: Ճանապարհի երկու կողմը փռված այգիները իմ աչքից ծածկեցին ամբողջ գյուղը: Իրար հաջորդող խոհերը, մեկը-մյուսից ծանր, մեկը-մյուսից ճնշող՝ մի տեսակ թմրութեամբ բերին վրաս: Ես սթափվեցի այն ժամանակ միայն, երբ համագյուղացի ուղեկիցներս, որոնք ինձանից բավական առաջ էին անցել, հեռվից ձայն տալով շտապեցնում էին ինձ:

Շուտով մեր ետևը թողնեք հայրենի գյուղի ձորն ի վար կախված այգիները ու արտերը: Այժմ մեր ձիերն ու ջորիները և ոտքով ճանապարհւորները կաղմել էին մի քարալան, որը գնում էր դուգահեռ լեռնաշղթաների մեջ սեղմված, առափնյա ժայռերի հետ ծեծկռտվող Արաքսի ափերով:

Գոռում, վայնասուն էր բարձրացնում Արաքսը, թակարդն ընկած մոլեգին վագրի նման, և խլացնում էր իմ ուղեկիցներին խոսակցությունը: Նրանցից ամեն մեկը բռնած իր գրաստի պոչից, խորասուզված յուր մտքերի մեջ, գլուխը կախ քայլում էր, միանգամայն անտարբեր դեպի շրջապատը:

Մուժ գիշերն արդեն փռել էր իր թևերը լեռների և նրանց գրկում արյուն ու փրփուր թքող Արաքսի վրա: Խոր մթության մեջ ոչինչ տեսնել չէր կարելի: Միայն մեր գլխավերևը անդնդախոր կիրճի նեղ բացվածքից պլպլում էին աստղերը: Մենք բոլորս խորասուզվել էինք մեր մտքերի մեջ, երբ ուղեկիցներին մեկն սկսեց իր տխուր «բայաթին», որը հիշեցրեց ինձ իմ հայրենի գյուղի չարքաշ կյանքի պայմանները և պանդխտի անմխիթար վիճակը: Երկրորդ օրը երեկոյան ես և ուղեկիցներիցս ձրկուսը գնացք նստեցինք, հրաժեշտ տալով մեր հայրենակիցներին:

Ես խոր հուզմունքիցս չկարողացա զսպել արտասուքս, երբ համագյուղացի Սամսոնը, կորացած մեջքով, մահակը ձեռքին ինձ քարի ճանապարհ մաղթելով, ասաց.— «Գնա՛, բալա ջան, էս չոր ու ցամաք երկրի քարերը կորացրին մեր մեջքերը, այստեղ մենք կիսաքաղց կյանք ենք քաշ տալիս, զոչալ կա՛ց ու հորդ հավարին հասխր: Թե տեղդ լավ լինի, իմ Գուրգենին էլ կուղարկեմ քեզ մոտ»:

*
* *

Երեք օր ու գիշեր ճանապարհ գնալուց հետո ես իջա Դաղլար կայարանում: Իմ գյուղական բարեկամների ասելով, այդ շրջանի հարուստ գյուղերում լավ փող կարելի էր աշխատել: Ես առանց ժամանակ կորցնելու, խուրջինը ուսս առած, առաջին իսկ հանդիպողի ցուցմունքով ճանապարհվեցի դեպի Դաղլար գյուղը, որտեղ ես պետք է հանդիպեի իմ հայրենակիցներին մեկին ու նրա օժանդակությամբ աշխատանք գտնեի:

Առանց դժվարությունների կատարվեց իմ ցանկությունը: Մի շաբաթից հետո ես արդեն Դաղլար գյուղում հովիվ էի: Ոչխաբատիրոջ մոտ կարճ ժամանակում այնքան վստահություն ձեռք բերել, որ նա իր հինգ հովիվներից միելի ինձ էր վստահում իր բոլոր անասունները կառավարելու գործը: Հինգ տարվա աշխա-

տանքն այդ տան մեջ ստեղծեց ինձ համար բարենպաստ պայմաններ, և ես կարողանում էի դժալի օգնութիւն ցույց տալ մեր ընտանիքին:

Հայրենի օջախի կարոտը վաղուց, գոն մի քանի օրով ինձ կանչում էր:

Իս խնդրի համաձայն Սեյիդ աղան (այդպես էին կանչում իմ տերօջիւր) ինձ թույլ տվեց մի ամիս ժամանակով հայրենի գյուղը գնալ, և ես առանց հետաձգելու, նույն գիշերը խուրջինս ուսիս գտնվում էի կայարանը տանող ճանապարհին:

Գնացքին հասնելու համար անհրաժեշտ էր մի ամբողջ օր ոտքով ճանապարհ գնալ և Ավդալար գյուղից ոչ հեռու գտնվող կայարանում գնացք նստել: Չնայած իմ բոլոր ջանքերին, այնուամենայնիվ գնացքին հասնել չկարողացա:

Երբ մոտեցա կայարանին, դեռ մի քանի հարյուր քայլ հեռավորութեան վրա լսեցի շոգեքարշի սուրացը, որից հետո անմիջապես գնացքը շարժվեց: Նա դուրս եկավ կայարանից և ես ստիպված էի ամիստասալ, որ չհասա գնացքին և շվարած կանգնած դիտում էի այն կայարանը, որտեղ պե՜տ է գնացք նստելի, փոքր էր և տննշան: Ուշացած ուղևորներն այդտեղ ապաստան գտնել չէին կարող: Ես քայլերս ուղղեցի դեպի մոտակա Ավդալար գյուղը, որի ճրագները մթութեան մեջ հազիվ էին նկատվում: Որոշել էի գիշերը այստեղ ապաստան գտնել և հաջորդ օրը ճիշտ ժամին կայարան գնալ՝ գնացք նստելու: Ծանոթ լինելով այդ երկրի սովորութիւններին, գիտեի, որ առաջին իսկ հանդիպած տանտիրոջից կարող եմ ապաստան խնդրել և մերժում չեմ ստանա:

*
**

Մտնելով գյուղը մի քիչ անհամարձակ քայլերով մոտեցա առաջին իսկ հանդիպած տանը և սկսեցի դուռը բախել: Չանցած մի քանի վայրկյան՝ դուռը բացվեց և իմ առջև կանգնեց մի կին, որն իր արտաքինով չէր կարող չհետաքրքրել ամեն մի տղամարդու: Սակայն տեղիս ազաթն ուսովորութիւնը արգելում էին խուզարկու հայացքով նայել կնոջ, և ես ակամա ստիպված եղա գործնական մարդու դիրք բռնել և նրան հայտնել իմ նպատակը:

Մինչ ես այս բոլոր մտորումների մեջ էի, կինը առանց որևէ խոսք ասելու, փակեց դուռը, թողնելով ինձ տարակուսանքի մեջ՝ տեղումս քարացած: Ես ուզում էի հաշիվ տալ ինձ ստեղծված դրուժյան մասին, երբ դուռը նորից բացվեց և ես տեսա իմ առջև նույն կնոջը: Նա մեկնեց ինձ լավաշ հացի մեջ փաթաթած ինչ որ ուտելիք: Նրա լուռ ու մունջ և անվրդով շարժ ու ձևերի հաճելի տպավորության տակ բնագրաբար մեկնեցի ձեռքս և նրա առաջարկած լավաշն ընդունեցի: Դրանից հետո նա կրկին փակեց դուռը. միայն այս անգամ ես լսեցի, թե ինչպես ներսից շխկաց փականքը ու տիրեց խոր լուռթյուն:

Շուրջս ամեն ինչ պարուրված էր թանձր խավարով: Աշխատային անձրևաջուրը կտուրների հողակալներից ծորում էր վայր, մեղմ հովի տակ թրթռացող մրսկան տերևներից կաթիլները կտկտում էին գետնին լճացած ջրերի մեջ, վրդովելով խորհրդավոր լուռթյունը: Որքան տարօրինակ, նույնքան և ախտավոր էր այդ կինը և նրա վարմունքը՝ Հեռաքրքրությունից ստիպված ես ծովեցի ու ներս նայեցի փականքի անցքից: Կովկասյան լեռնականի սովորական մի տուն էր՝ ծխից սևացած պատերով և հողի հատակով մի մեծ սենյակ, որի հարթ կտուրը պահվում էր հաստ գերաններով ու երեք հատ կացնատաշ փայտյա սյուներով: Այդ սյուներից մեկին կախված նավթի ճրագի աղոտ լույսի տակ կարելի էր տեսնել որոշ կարգ ու կանոնով դասավորված իրեղենները: Պատի տակ մի կողմի վրա դարսված էին փեթակներ ու հացահատիկներով լիքը տոպրակներ: Այնուհետև ըստ մեծության, նույն ուղղությամբ շարված էին հավանորեն մթերքներով լիքը կճուճներ: Պատի մեջ բացված անդուռ, լայն պահարանում դարսված էին գորգերն ու անկողինը, որոնք խոսում էին լեռնականի ավելի քան բավարար տնտեսության մասին:

Մի դուռ այդ ընդարձակ սենյակից տանում էր դեպի հարեվան սենյակը, որն ըստ երևույթին, ծառայում էր որպես գոմ: Երբ ես ներս էի նայում, այդ դուռը բաց էր և ես տեսնում էի, թե ինչպես կինը պալած կթում էր կովը:

Ես գլխի ընկա, որ տան տղամարդը տանը չէ. դա ինձ համար պարզվեց կնոջ ինձ ցույց տված վերաբերմունքից:

Գնալով ավելի ու ավելի էր թանձրանում խավարը, անձրևեվին վերջ չկար: Անհրաժեշտ էր, որ ես մի անկյուն գտնեի

գիշերելու համար: Այս մտքով տարված՝ ես թեքվեցի տան առաջ-
տի մյուս կողմը: Նկատելով որ տանտիրոջ գոմի դուռը դրսի
կողմից բաց է, ես որոշեցի մի կերպ այդ դռնովը ներս սողալ ու
գիշերել գոմում:

Առանձնապես մաքուր անկյուն փնտրելու ժամանակ չկար,
ոչ էլ ճրագի լույսի անհրաժեշտութիւն. էի գոռմ. հաց ունե-
հատ: Ուրեմն ամեն կողմից ապահով էի գիշերը լուսալիւծ հա-
մար. մնում էր գործի դիմել, և ես մի ոստյունով կարողացա-
ներս մտնել և կուչ գալ առաջին իսկ հանգիստ անկյունում:
Գոմից դեպի սենյակը տանող դուռը բաց էր: Ես անհանգստա-
նում էի այն մտքից, թե, արդյոք, չէ՞ն նկատի ինձ. իմ դրաված
անկյունից խուզարկու աչքերով սկսեցի ավելի հարմար տեղ ու-
րոնել: Ես բոլորովին մոտեցա սենյակը տանող դռան և ստիպ-
ված եղա մի պահ կանգ առնել նրա հտեք, քանի որ նույն մի-
ջողին տանտիրուհին ներս մտաւ գոմը: Թեև այնտեղ մուտք էր,
բայց և այնպես իմ անհաջող զիրքը կարող էր մատնել ինձ, ե-
թե վայրկենապես չփոխեի իմ տեղը:

Համոզված լինելով, որ տանը բացի տանտիրուհուց ուրիշ
մարդ չկա, իսկույն ներս ընկա սենյակ և թաքնվեցի փեթակ-
ների հտեք: Դա միակ հարմար տեղն էր, որ կարող էր ինձ ան-
տեսանելի դարձնել տանտիրուհու աչքերից:

Մեկը մյուսին հաջորդող մտքերն ինձ միանգամայն մո-
ռացնել տվին իմ արարմունքի հետևանքը: Բայց, չգիտեմ ինչու,
սիրտս միանգամայն հանգիստ էր, իմ կատարած քայլը թվում
էր ինձ շատ բնական: Չնայած՝ այդ տունը մտնելիս ոչ
մի հետին միտք չունեի և իրար հետևող ղեպքերը միայն ինձ
հասցրին իմ ներկա դրութեանը:

Լեռնական տղամարդու համար ավելի վերավորական բան
չէր կարող լինել, քան այն, երբ իր բացակայութեանը որևէ օ-
տարական ոտք էր դնում նրա տանը: Շատ լավ գիտեի, որ
այդպիսի ղեպքերում «վիրավորված» պատիւը վերականգնվում
է սեկի կամ մյուսի կյանքի գնով: Համենայն դեպս բանը բա-
նից անցել էր, պետք էր լռել ու առավոտյան մի կերպ դուրս
պրծնել այդ տեղից:

Այդ մտքերով տարված էի, երբ տանտիրուհին փակելով դռնի դուռը, ներս մտավ սենյակը: Մոտենալով վառվող օջախին, իջեցրեց նրա վրա դրած կաթսան, շարժվեց դեպի դուռը, պահ մի կանգ առավ, ապա կրկին վերադառնալով, նստեց թախթին փոված անկողնում և սկսեց արձակել իր փարթամ մազերը:

Հանկարծ դուռը ծեծեցին: Տանտիրուհին, որ կարծես սպասում էր այդ ձայնին, շտապով վայր իջավ թախթից և հանգիստ քայլվածքով մոտացավ, բացեց դուռը:

Ներս մտավ յափնջի մեջ փաթաթված մի տղամարդ, որի ետևից անմիջապես փակվեց դուռը: Նա արագ շարժումով դեն ձգեց յափնջին, հանեց դուռնի մորթուց պատրաստված փափախը ու մոտեցավ կնոջը, որն սպասողական դրուժյան մեջ էր:

Նրանք մի քանի վայրկյան ակնապիշ նայեցին իրար, ապա առաջանալով զրկախառնվեցին և այդ դրուժյամբ երկար ժամանակ համբուրվում էին: Թեև աղոտ լույսի տակ ես դժվարանում էի որոշել տղամարդու գեմքի գծադրության մանրամասնությունները, այնուամենայնիվ նկատելի էր, որ նա երիտասարդ է, կրակոտ աչքերով և նուրբ ուրած բեխերով: Նրա տարազը ոտքից գլուխ ապացուցում էր, որ նա տեղացի էր.— «Երևի տան տերն է և այդ գեղեցկուհու ամուսինը» — մտածում էի ես:

Սակայն այն բոլորը, ինչ կատարվում էր աչքիս առաջ, կասկածի տեղիք էր տալիս: Նրանց անխոս ու ջերմ սիրաբանությունը նման չէր ամուսինների սովորական հանդիպումին: Թերևս նրանք նոր ամուսնացած էին, բայց, չգիտեմ ինչու, այդ ևս կասկածելի էր թվում: Լեռնականների կենցաղային օրենքները, որոնց ես լավ տեղյակ եմ, սահմանափակում էին ենթադրություններս ու հնարավորությունն չէին տալիս ճշտելու իմ եզրակացությունները:

Կանգնած փեթակների ետևը, նրանց արանքից նայում էի և սպասում, թե ինչով կվերջանա այս բոլորը: Տղամարդը ճկուն շարժումով յուր ձեռների վրա բարձրացրեց տանտիրուհուն և մոտենալով թախթին, պառկեցրեց նրան անկողնու վրա: Նրանք բավական ժամանակ անձնատուր էին եղել իրենց քաղցր ապրումներին, երբ հանկարծ դուռը բախեցին:

Կայծալի արագությամբ նրանք վեր թռան ու շվարած՝ մի քանի վայրկյան իրար էին նայում: Ինչ որ անհանգստություն տիրել էր նրանց, շփոթված ու ալլալված՝ նրանք չէին կարողանում որոշել իրենց անելիքը: Կրկին դուռը բախեցին, այս անգամ ավելի ուժեղ: Տղամարդը արագորեն վերցրեց յափնջին ու փափախը, կատվի ճկունությամբ անցավ փեթակների ետևը ու կուշ եկավ ինձնից փոքր ինչ հեռու, դեպի աջ:

Ինձ համար անբացատրելի հանելուկը կամաց-կամաց լուծվում էր: Չնայած որ իմ զբոսը չունում էր, դառնում վտանգավոր, այնուամենայնիվ այդ բոլորը լարել էր իմ հետաքրքրությունը:

Մինչ կինը պատրաստվում էր մոտենալ դռանը, դարձյալ դուռը երկու անգամ բախեցին, որից անմիջապես հետո մի ուժեղ հարվածից դուռը բացվեց. կինը անհամարձակ կանգնած էր դռնից երեք քայլ հեռու:

Ներս մտնողը մի հաղթանգամ, բարձրահասակ տղամարդ էր, սև մորուքով, երկար ու հաստ բեխերով: Նրա երկարավուն դեմքի վրա նշմարելի էին խոր կնճիռներ, իսկ հոնքի մոտ՝ ճակատի վրա մի սպի, որը դաժան արտահայտություն էր տալիս նրա դեմքին:

Նա հազել էր լեռնալանի տեղական չուխա և երկարավիզ կոշիկներ, որոնց մեջ ամփոփված էին շալվարի լախ դստերը: Նրա բարակ ու ըստ երեվույթին ձկուն մեջքի արծաթյա դոտուց կախված էր արծաթյա պատյանով դաշույնը: Ներս մտնելով՝ նա մի պահ կանգ առավ: Կես քայլի չափ հեռացրեց ոտներն իրարից՝ հավանորեն իր կեցվածքը հաստատուն ու վճռական դարձնելու համար, հանդարտ փակեց դուռը եվ հանգիստ քայլերով անցավ սենյակի խորքը:

Նույն անխուռլ հանգստությամբ նա մի կողմ ձգեց ձեռքի մտրակը, հանեց ուսերի վրա գցած յափնջին, ձեռքի ծանր շարժումով ետ տարավ մորթե փափախը և շփելով երեսը, նստեց վառվող օջախի առջև: Նա լուռ նայում էր վառվող կրակին, աչքերն անթարթ մի կետի հառած: Այլևս կասկածից զուրկ էր, որ նա տանտերն էր և կնոջ ամուսինը:

Մինչ այդ բոլորը տեղի էր ունենում, կինը աշխատում էր բնական ձև տալ իր շարժումներին. մոտեցավ անկողնին, փաթաթվեց բրդյա շալի մեջ, մոտեցավ օջախին՝ նրա մոտ դրված

Վաթսան վերցնելու: Տղամարդը բռնեց նրա ձեռքից և անխոս ու անխռով դեպի իրեն քաշեց, հասկացնելով կնոջը, որ նա նստի իր կողքին: Կինը հնազանդվեց:

— «Ո՞վ կա այս տանը» — հարցրեց տղամարդը, շարունակելով նայել բոցավառ կրակին:

— «Ես և դու» — պատասխանեց կինը:

Տղամարդը կայծակի արագությամբ շրջեց գլուխը, աշխատելով զսպել իր կատաղությունը: Փեթակների հետևը թաքնված բաղդակիցս մթության մեջ խարխափելով մոտենում էր ինձ: Ես նախադալով վերահաս անախորժությունն ու նրա հետ կապված հետեանքները, մտմտում էի իմ անելիքը, որով հնարավոր լիներ աղատվել այս ծուղակից: Իմ բախտակիցը սողալով կպավ ինձ և ցանկանալով պարզել ինչ առարկա լինելս, սարսափահար շոշափում էր ինձ: Ես մի թեթև շարժումով հասկացնել տվի նրան, թե իր կողքին մարդ է: Մինչդեռ նա վայրկենական ցնցումից հետո պաշտպանողական դիրք էր բռնել, ես ձեռքի բարեկամական շարժումով հանգստացրի նրան և հայտնեցի, որ ես ամեն բան գիտեմ:

Փոխանակվող երկու խոսքով մենք իրար հասկացանք. նա կրկին շոշափեց ինձ և զգաց, որ մոտս սուր ունեմ: Զրույց խեղդվող անճաբի պես նա ձեռքը մեկնած պահանջում էր ինձնից սուրը՝ տանաիրոջը սպանելու համար: Համաձայնել այդ մտքի հետ չէի կարելի: Տան տիրոջն իր տանը սպանելը տմարդություն կլիներ: Ուստի բախտակցիս հասկացրի, որ նա կատարի իմ ասածները և ես կազատեմ թե ինձ և թե իրեն, առանց լուրջ փնտս հասցնելու տանտիրոջը:

— Վերցրու ձրագը և առաջ անցիր, — շեշտակի և կտրուկ գոչեց տան տերը, որ ոտքի կանգնած, աջ ձեռքը դաշույնի դաստակին, տիրական հայացքով հետևում էր կնոջ շարժումներին: Նա իր խուզարկությունը սկսեց նրանով, որ կռացավ և նայեց թախթի տակը՝ առանց ձեռքը դաշույնի դաստակից հեռացնելու: Վասիլածից դուրս էր, որ մեզ մի քանի րոպեից հետո կգտնեին. այդ գիտակցությամբ էլ թեթևակի բոթելով բախտակցիս, ցույց տվի տոպրակների կողմը, հատակից բարձր լուսամուտը: Նա հասկացավ ինձ և մենք պատրաստվեցինք գործնական քայլերի գիմել: Առաջինը լինել առաջարկեցի նրան:

Փեթակներից հացահատիկներով լիքը տոպրակների վրա

անցնելու համար պետք էր կատարել մի թեթև ուսուցում, որից հետո կարելի էր ապահովաբար լուսամուտից դուրս պրծնել։ Գործին հաջող ընթացք տալու համար, անհրաժեշտ էր նախ և առաջ սառնասրտութիւնը։ Ես նախօրոք աչքով տեսողել էի շուրջս գտնված բոլոր առարկաները ու որոշել նրանց հետ վարվելու ձևը, դրանք ինքնապաշտպանության համար գործածելուն պատահելով։

— «Նախ հարկավոր էր դուրս պրծնել բնակարանից, այնուհետև դուրսը հարկ եղած դեպքում կարելի է մենամարտության բռնվել» — մտածում էի ես։ Այս մտքերով տարված՝ ես հետեւեցի իմ բախտակցին և մի ուսուցումով երկուսս էլ արդեն գտնվում էինք դարսված տոպրակների գլխին։

Գազանացած տան տերը, թողնելով կնոջը, մերկացրեց դաշույնը և հարձակվեց մեր վրա։ Մինչ «ընկերս» մի վճռական թռիչքով լուսամուտին կմոտենար, տանտերը շտապեց առաջին հարվածը նրան հասցնելու։ Առանց շփոթվելու բարձրացրի փեթակների վրա դրված թամբը և պատրաստվում էի ամբողջ ուժով դեպի տանտեր շարտել, որպեսզի կասեցնեմ նրա հարձակումը։ Չնայած ամեն ինչ լավ էր մտածված, բայց պատահական անհաջողութիւնը փոխեց գործի ընթացքը։ Թամբը շարտելիս նրա թուկը կախվեց վզիցս և ես շանթահար եղածի պես թամբի հետ միասին բերանքսիվայր ցած գլորվեցի, ընկնելով տանտերով գլխին։ Ընկերս օգտվելով այդ հանգամանքից արդեն դուրս էր թռել։

Տանտիկինը ճրագը ձեռքին ու գունաթափ, ապշած հետեւում էր այս բոլորին և աշխատում էր սառնասիրտ լինել։ Նրբեւ թամբի փոկից ազատվելով ուզում էի բարձրանալ, տան տերն արդեն կանգնած էր իմ գլխավերեւը և կրճատցնում էր ատամները, թափ հոնքերի տակից հետեւելով իմ շարժումներին։ Իմ վերկենալու բոգերին նա գցեց ձեռքը դաշույնիս և ուժեղ ցնցումով պոկեց այն գոտուս հետ միասին ու շարտեց տան անկյունը։

— «Նախքան ինձ սպանելը կխնդրեի լսել իմ մի քանի խոսքը» — դիմեցի տանտիրոջը, բռնելով վերավորված ճակատս։

— «Քեզ խոսելու ժամանակ կտամ» — ասաց նա հարվածելով ծոծրակիս։ Այս հարվածից ես մի քանի քայլ առաջ մղվեցի՝ ապա լսեցի նրա ձայնը — «խոսիր»։

Ես առանց հավասարակշռութիւնս կորցնելու մեղմ տոնով պատմեցի նրան եղելութիւնը, ավելացնելով—«Գիտե՞ք ինչ կա-
բարեկամ, ես չէի ուզի որ իմ մեռնելուց հետո քեզ համար որեւէ
մուրթ հարց մնար, ուստի պարտքս համարեցի պատմել քեզ ողջ
իրողութիւնը»:

Իմ պատմելու միջոցին ես երբեմն ակամա նայում էի նրա
հայացքին և ինձ թվում էր, թե իմ անկեղծ պատմութիւնը
համոզում էր նրան, որ ես անմեղ եմ միանգամայն:

Վերջացնելով ասելիքս, ես թուլացած և ուժասպառ սպա-
սում էի օրհասիս ու հետևում տանտիրոջ ամեն մի շարժմանը,
միաժամանակ ինձ ու ինձ ենթադրելով այն եղանակը, որ կա-
րող էր գործադրել նա ինձ սպանելիս:

Հակառակ իմ սպասածին, նա կարգադրեց կնոջը՝ պատրաս-
տել ընթրիքի սեղան: Կիսը մեքենայաբար կատարեց ամուսնու
հրամանը: Ես մնացել էի շմամ տանտիրոջ այս վարմունքից՝
Ընթրիքից հրաժարվել չկարողացա: Չնայած ծանր հոգեմաշ ըր-
պենքերին, ուտելու ոչ մի ցանկութիւն չունեի, այնուամենայ-
նիւ ակամա մասնակցում էի ընթրիքին, միմիայն տանտիրոջ
առաջարկը հարգած լինելու համար:

Ընթրիքից հետո նա առաջարկեց հանվել ու քնել: Ես մե-
քենայական շարժումներով տղամարդու ուղեկցութեամբ մոտեցա
առանձնապէս ինձ համար պատրաստված անկողնին և հանվելով
պառկեցի:

Իմ շարժումների մեջ մնում էի միանգամայն ենթարկված
տանտիրոջ ցանկութիւններին և կատարում էի նրա ամեն մի
առաջարկը այնպէս, ինչպէս յուրաքանչյուր ոք կատարում է
հիպնոզացնողի թելադրանքը: Թե որքան ժամանակ էր անցել
իմ պառկած ըրպեքից, որոշել չէի կարող, բայց թմրած գրութիւ-
նից սթափվեցի այն ժամանակ միայն, երբ տանտերը զարթե-
ցրեց ինձ: Նա հարգանքով հայտնեց ինձ, թե լուսաբացը մոտ է,
անհրաժեշտ է վեր կենալ:

Ինձ համար անբացատրելի զգացումների ազդեցութեան
տակ ես հագնվեցի և հլու հնազանդ, սպասում էի կատարելու
նրա հերթական առաջարկը: Նա առաջնորդեց ինձ դեպի դուռը:
Մի քանի քայլ հեռավորութեան վրա ես նկատեցի, որ տանտի-
րոջ կիսը կանգնած է ձիու կողքին, բռնած նրա սանձից: Զիւռ-
թամբին ձգած էր մի խուրջին, ինչ որ բանով: Երբ արդեն մո-

տեղեկ էինք ձիուն, նա ինձ առաջարկեց հեծնել: Ես դարձյալ մեքենայաբար կատարեցի նրա առաջարկը:

— «Դու նորից այս կողմերը պիտի գա՞ս, թե չէ» — Լսելի հղավ տանտիրոջս ձայնը, երբ ես արդեն ձիու վրա էի գտնվում ու խրովիլակի պես տարուբերվում ձիու անհանգիստ շարժումներին:

Ես շժմած ու մտամոլոր՝ այս բոլորից, ուզում էի ինչ որ մի բան ասել, բայց կարկամած լեզուս չէր ենթարկվում կամքիս և ես ի պատասխան նրա հարցին, գլխի մի անորոշ շարժում կատարեցի: Ցանտերը չսպասելով իմ պատասխանին, ավելացրեց. — «Եթե գալու լինես այս կողմերը, չմոռանաս ինձ հետ կերածդ աղ ու հացը, մտի՛ր իմ տունը և հարցրու Սաթթար Քյարամի հալ ու ափսոսանք, լավ խնամիր ձիուն, նա շատ օգտակար կարող է լինել քեզ»:

Վերջացնելով իր խոսքը, նա ձեռքի մեղմ հարվածներով շոյեց ձիու վիզը և աղբահաշան տվեց ինձ ճանապարհ ընկնել: Այս քոլորը թվում էր երազ... Նրա վերջին խոսքերից զգացված, քաշեցի ձիու սանձը և կենդանին համաչափ ընթացքով առաջ շարժվեց դեպի հեռու, վաղորդյալն աղջամուղջի մեջ հազիվ նկատելի փոքրիկ բլուրների ուղղությամբ:

* * *

Անցան շատ տարիներ...

1930 թվականի գարնանը ես գործուղված էի շրջան՝ դեպի ավարելու գարնանացանը: Հիշեցի տարիներ առաջ այդտեղ ինձ հետ պատահած դեպքը, և որոշեցի այցելել իմ այդ աղնիվ բարեկամին: Իշնելով գնացքից, ամմիջապես բռնեցի այն ճանապարհը, որով ես պետք է հասնեի իմ նպատակադրած վայրը: Մոտենալով Սաթթար Քյարամի բնակարանին, ես ոչինչ չգտա այնտեղ, բացի կիսաքանդ, սևացած պատերից: Ենթադրելով, որ ես սխալմամբ ուրիշ տեղ եմ ընկել, դիմեցի մի պառավ կնոջ, որը կանգնած էր կուտ ուտող հավերի առաջ, ոչ հեռու այդ ավերակներից: Իմ հարցին, թե արդյոք, նա չգիտե՞ Սաթթար Քյարամի տունը, պառավը ոչինչ չպատասխանեց, աշխատելով երես դարձնել ինձանից:

Երբ ես բարեկամական վերաբերմունքով դիմեցի կնոջը հերկորդ անգամ, նա առանց կասկածանքի և զգացված պատմեց,

թե ինչպես տարիներ առաջ բոլոր գյուղացիների համար անհայտ պատճառով Սաթթար Քյարամը դաշույնով կտոր-կտոր է արել կնոջը, ապա հրգեհնելով իր տունը, մի անգամ ընդմիշտ անհետացել է գյուղից:

Ինձ համար ամեն ինչ պարզ էր, անսպասելի ոչինչ չկար, ուստի շնորհակալությունս հայտնելով պառավին յուր տված տեղեկության համար, հեռացա ծանր ու սրտամորմոք զգացմունքներով:

*
* *

Անցավ մի քանի տարի ևս:

1937 թվականն էր: Այդ օրվա թերթը ձեռքս առնելով նկատեցի Սուլեյման Ստալսկու նկարը՝ սև շրջանակի մեջ: Հայտարարված էր թաղման օրը:

Ուղեցի ներկա լինել բանաստեղծի թաղմանը: Մյուս օրը գնացի բանաստեղծի բնակարանը, բայց ուշացել էի. հասա այն միջոցին, երբ հուղարկավորությունը արդեն շարժվել էր դեպի գերեզմանատուն: Շտապ քայլերով բռնեցի գերեզմանատան ճանապարհը և բանաստեղծի դիակը դտա այնտեղ՝ շրջապատված հուղարկավորներով:

Աշնանային պարզ ու գեղեցիկ օր էր: Հավաքվել էր մեծ բազմություն: Լեռնային Դադստանի աշխատավարձ մասսան էր կազմում մեծամասնությունը: Նա եկել էր իր հարգանքը մատուցանելու բանաստեղծի աճյունին:

Թաղմանը ներկա էին Սովետական Միության կենտրոններից և գյուղերից եկած պատգամավորները:

Մեծ գժվարությամբ հոժ յազմությունը ճեղքելով առաջ նետվեցի ու կանգ առա մռայլ գերեզմանի առաջ, որի մոտ դրված էր բանաստեղծի դագաղը: Դադստանի ժողովրդական երգիչը՝ Խրոխտ լեռների քաղցրախոս բլբուլը, կարծես քնած լինեի խաղաղ ու անգործ, որովհետև իր երգեմնի չարքաշ ժողովուրդը լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության շնորհիվ զիմուժ է դեպի լուսավոր ապագա:

Սուլեյմանի հարազատները, մոտիկ բարեկամներն ու ընկերները մի շրջան կազմած, գլխիկոր և արտասովալից աչքերով նայում էին հանգուցյալի անկնիզան ու պաղ դեմքին: Տասնյակ տարիներ շարունակ լեռնային բլբուլի սիրառատ, զգայուն սիրտը էլ չէր բարախում:

Հանդես է գալիս մի պատկառելի ծերունի՝ Սուլեյմանի մանկության ընկերը։ Նա ոչ թե խոսում, այլ մանկան պես հեկեկում է։ Նա հուզված պատմում է իրենց անցյալ օրերի դառն կյանքից այնքան սրտառուչ, որ ունկնդիրների աչքերից արցունք է բամբռում։

— «Ընկերներ, այժմ կխոսի կոլխոզի նախագահ Սաթթար-Քյարամը» — հայտարարեց թաղման հանձնաժողովի նախագահը։

Սաթթար-Քյարամ ծանոթ անունը լսելով, ես սթափվեցի ինձ պաշարած մտքերից և նայեցի այն մարդուն, որը պատրաստվում էր խոսելու։

— «Միթե նա է» — հարց տվի ինքս ինձ։ Ես դժվարությամբ ճանաչեցի նրան։ Որքան փոխվել է նա։ Այո, նա է, իսկ և իսկ նա, իմ տեսած վիթխարի ու հաղթանդամ մարդը, որի անունը կապված է մի տխուր դեպքի, անցյալ մի ողբերգության հետ։

Լեռնային մաքուր օդն ու պարզ կյանքը դեռ պահել են նրա թարմությունը։ Նա դեռ պահպանել է ջլապինդ ձեռները և լայն թիկունքը։ Փոխվել է միայն նրա գեմքի նախկին բիրտ գծադրությունը, որը նրբացել է ու պայծառացել։ Նրա երբեմնի արյունակալած աչքերը այժմ դարձել են խոհուն և մտածկոտ։

Մի ձեռքը խանչալի ործաթյա դաստակին հենած, մյուսը բռնեցք արած՝ ճոճվում էր օդի մեջ և խոսում մեծ ոգեվորությամբ։ Այդ խանչալով նա մի գիշեր կտոր-կտոր արեց իր կնոջը, իսկ այսօր կապած ունի ոչ իբրև զենք, այլ տեղական տաբաղի մի մասնիկը։

Որքան փոփոխություն նրա խոսակցությունն ու շեշտի մեջ, որքան մատչելի է նրա խոսակցության նյութը բոլորին։

Աշխատանքային կարմիր Դրոշի շքանշանը զարդարում է նրա առնական կուրծքը։

Սաթթար-Քյարամը ցած իջավ պատվանդանի քարից։

Ես ցանկացա մոտենալ, ձեռք տալ, գրկել ու համբուրվել այդ վերածնված մարդու հետ, բայց չկարողացա, որովհետև դժվար էր գտնել նրան հոժ բազմություն մեջ։

Հասավ այն վայրկյանը, երբ պետք է գերեզման իջեցնեին հանգուցյալի դագաղը։

Հարազատները իրենց ջերմ համբույրներով վերջին անգամ
Ֆրաժիշտ տվին Սուլեյմանի աճյունին:

Բանաստեղծի փոքր տղան կարգաց սրտառու է մի ոտա-
նավոր:

Ս. Ղրոշակները խոնարհվեցին և հրացանի երեք համադար-
ձի տակ դադարը իջեցրին մռայլ փոսը:

Բազմազան մտքերի մեջ խորասուզված՝ հեռացա մարդկային
Այանքի վերջին կայանից, որի մոտ մի քանի բոպե առաջ խոսող
Պաթթար-Գյարամը որպես մեր օրերի վերածնված մարդ գրավել
էր իմ բոլոր մտքերը:

1938 թ.

Քրիլիսի

ԴԵՊԻ „ՍԻՐՈ ԵՎ ԽԱՐԴԱՎԱՆՔԻ Ա Մ Ր Ո Ց Ը“


Սիրելի ընկեր.

Հաճույքով եմ վերցնում զրիչը՝ բնության հետ կապված իմ ամառային տպավորություններն ու ապրումները քեզ հաղորդելու համար։ Այս վերջին նամակս գրում եմ մի վայրից, ուր բացվում են առջնդ դյուլթական պատկերներ, որ ամենքին չի հաջողվում տեսնել սեփական աչքերով և զգալ նրա վեհությունը...

Այս վայրը, ուր գտնվում եմ ես հանգստանալու բերամբ, թվում է ինձ, թե աշխարհի բացառիկ անկյուններից մեկն է, ուր բնությունը մի կողմից, մարդկային ստեղծագործ աշխատանքը մյուս կողմից՝ փոխել են շուրջդ իրենց բարիքները։ Այստեղ, քաղաքի ադմկոտ կյանքից հեռու, մարդ զգում է երանություն անգործություն, ունենալով բարդիների մեղմ սոսափին, ջրերի քաղցր մրմունջին... Լինում են վայրկյաններ, երբ ակամա ուզում ես միաձուլվել տերևների այդ սոսափի, ջրերի այդ մրմունջի հետ, ուզում ես անէանալ, կորչել մեծ ամբողջի մեջ, որը հարափոփոխ ապրում է հավերժորեն։

Այստեղ, վեհաշուք բնության ծոցում լսում ես նրա ներդաշնակ մեղեդին, որ բերում է գեփյուռը ձյունապատ լեռներից, ծաղկավետ մարգերից, անդնդախոր ձորերից, փրփրաբաշ ջրվեժներից, մեկամտգծիկ աղբյուրներից և պուրակի նազանքով տաքուրերի՜նոյ ծառերից։

Այստեղ ամեն ինչ խոսում է հետդ խորհրդավոր մեղմ շունջով և՛ թփուտը, և՛ խոտաբույսը, և կապուտաշյա ծաղիկը, և իրիկվա միջնաշաղի մեջ ադմկոյ ջրվեժը, և՛ կանաչուտում խլրտացող միջատը։



Բացվում է արշալույսը:

Կապտավուն մշուշը, որ փռվել է պուրակների և ձորերի վրա, ծփում է ծովածավալ ջրերի պես, հետզհետե նոսրանում ու ցնդում, տեղի տալով արևի կենսարար շողերին:

Հորիզոնի մոտ բռնկվել է մեծ հրդեհը: Էլբրուսի ձյունապատ գագաթը որսում է անդրանիկ ճառագայթներն արևի ու փայլում դյուլթական երանգներով:

Հեռանիստ գյուղերից բարձրանում է ծուխը մեղմօրոր գալաքվում է դեպի վեր առասպելական վիշապի նման ու փռվում թևարձակ՝ նույն գյուղերի վրա: Զարթնում է կյանքի ամենուրեք, շնչում լիաթոք:

Փարվում են արևի ճառագայթներին գեղուղեղ բարդիները, քարձրադիր պուրակը, ձեռնասուն ծաղիկները և ձորակով թափվող ջրերը խոտաբույսերի հետ:

Զարթնել է կյանքը և բաց արել խայտանկար մի հանգես: Մշուշոտ ու տխուր զրույցի հետ կապված այդ ամբողջ գտնվում է քաղաքից դուրս, արևընդդեմ բարձրության վրա՝ մեն մենակ, առանձնակի, որ աղմուկը մարդկային չաղարտե իր խոհերը մոայ:

Մենք, ավտոմեքենայում արդեն բռնել ենք մեր տեղերը: Մեքենավարը կարճահասակ, թիկնավետ, ինքնամփոփ մի երիտասարդ՝ բարձրացավ, նստեց դեկի մոտ, տվեց ազդանշանը, հետադարձ թուղցիկ հայացքով աչք ածեց ուղևորներին և մեքենան շարժեց դեպի հյուսիս: Ավտոն հանդարտ և զգուշությամբ ասես սողոսկում է՝ քաղաքամերձ շուկայում խլրտացող մարդկանց չվնասելու համար:

Մեր ետևն ենք թողնում շուկան՝ իր եռուն կյանքի աղմուկով և բռնում դեպի աջ ձգվող խճուղին, որ սեղմված է լեռների մեջ:

Որքան առաջ է շարժվում մեր ավտոն, այնքան լարվում է ուշադրությունս դեպի բնության խաղերը, գեղանկար պատկերները, խճուղին եզերող թփուտները, որոնք անդիմադրելի զորությամբ գերում են սիրտս ու հոգիս, իրենց վրա գամում աչքերս:

Ծառավ մարդու պես որոնում եմ նոր տեսարաններ, նոր պատկերներ: Ուշադրությունս գրավում են նոսր մշուշով պա-

բռնված՝ դիմացի կապտավուն բարձունքները, որոնք հետզհետէ ազատվում են անձեռագործ շղարշից և ցուցադրում իրենց արևշող լանջերը:

— Սքանչելի է Հյուսիսային Կովկասն իր խրոխտ լեռներով, մռայլ անդունդներովն ու բնության բազմապիսի տեսարաններով,—դառնում է ինձ կողքիս նստած ուսւ բնագետը, որ Մոսկվայից առաջին անգամն է եկել Հանքային ջրերը:

— Ավելի խրոխտ են Անդրկովկասի լեռները, որոնց կատարները թաղված են ամպերի կամ երկնքի կապույտի մեջ,—վրա եմ բերում ես,—Անդրկովկասի բնությունն ավելի բազմազան է, ավելի վեհաշուք:

Օ՛, Անդրկովկասն ուրիշ բան է, մանավանդ մեզ, հյուսիսում ապրողներին համար: Այնտեղ ե՛լ լեռներն են խրոխտ, և անդունդներն են ահալոր.—հաստատում է իմ խոսքը բնագետի կողքին նստած ժուռնալիստը իր թախծոտ հայացքն ուղղելով դեպի հեռանիտ բարձունքները, որոնց վրա արեւ ոսկեփոշի էր ցնցուղել:

— Դուք եղե՛լ եք Անդրկովկասում.—հարցրի ժուռնալիստին անվտանգությամբ:

— Եղել եմ մի քանի աստով. շատ վաղուց, ծանոթ եմ Անդրկովկասի գլխավոր վայրերին:

— Այժմ չեք ճանաչի ձեր տեսած վայրերը,—հարեցի ես պարծանքով:

— Չեմ կասկածում:

Մեքենան կատարում է շրջադարձ և առաջ է նետվում խճուղու ձախ կողմից ընկերանում է մեզ լեռնային գետակը, որի զուլալ ջրերը անուշ մրսունջով թափվում են ձորնիվար: Արևի շողերը կաթել են վերևից ու զովանում են պաղպաջուն կոհակներին մեջ: Դեպի գետակը երկարող ցամաքի մի շերտ վերջանում է անհեթեթ, վիթխարի ժայռով, որ թեքված ջրերի վրա, առասպելական վիշապի նման, ասես, ծծում է ջրերն անհագորին:

Ավտոն կտրեց-անցավ այդ անրջական ձորի երկարությունը և կանգ առավ լեռան ստորոտում, որտեղից նեղ արահետը օձապտույտ գալարումներով ձգվում է դեպի վեր, դեպի ամբողջը:—

Միրելի ընկե՛ր.

Դրիչս անգոր է նկարագրելու բնության այն չքնաղ տեսարանը, որ փռված է շուրջս, դեպի ամրոցը տանող ճանապարհին: Թվում է ինձ, թե մարդկային լեզուն շատ անգոր է և թույլ՝ նկարագրելու համար մեր անցած վերելքի և ամրոցից բացվող տեսարանների թովչանքները...

Միրտա այրվում է այն գիտակցությունից, որ օժտված էիմ տպավորություններս ու հույզերս հարազատորեն արտահայտելու ձիրքով...

Այժմ, երբ անբռնադատ ցանկությամբ ուզում եմ կիսել քեզ հետ իմ ապրումները, պատկերանում է ինձ համրն ու խուլը, որ տարիներից ի վեր իր ներսը կուտակված հույզերը մեկն ու մեկին հաղորդել չկարողանալուց՝ ջղաձգորեն կծկում է դեմքի մկանները, կամ հեծկտում անձայն, անարցունք:

Զգալով հանդերձ իմ անգորությունը, ահավասիկ ձգնում եմ թոթովախոս լեզվով հաղորդելու այս դյուլթական վայրից ատացածս տպավորությունները, որոնց ծանրության տակ ձնշվում է հոգիս:

Բնությունն այստեղ հոյակապ է ու վեհաշուք՝ իր բազմազան խաղերովն ու կոտորաստներովը: Նա ունի ի՛ր կյանքը, իր օրինաչափությունը: Բարձրանում են լեռները կողք-կողքի՝ առառելիական հսկաների նման պար բռնած և անհիշելի ժամանակներից իրենց շարժման ու խոյանքի մեջ արձանացած: Թավաշանման կանաչը փռվել է նրանց լանջերից մինչև փեշերը՝ ցուցադրելով երփներանգ ծաղիկներ, որոնք տարուբերվում են մեղմ հովից և փսփսուքով պատմում իրար անցած-գնացած խորհրդավոր մի գրույց... Այդ լեռների բարձունքներից թավալվող առնորակ, վճիռ աղբյուրների տեղ-տեղ առանձին, տեղ-տեղ զրկախառն ձգվում են դեպի ցած, որպես արծաթյա ժապավեններ: Դրանք, աչդ զուլալ ջրերը սողոսկում են ներքև մերթքաղցը, դուրեկան մրմունջով, մերթ բարձրագոչ խրոխտ շառաչով:

Որքան և զառիթափ է վեր մագլցող արահետը, այնուամենայնիվ մեզ հրապուրում, անդիմադրելի ուժով դեպի ինքն է ձգում դյուլթական ամրոցն իր մենության մեջ:

Դրտինքը կայակենքով թափվում է մեր դեմքերից, մենք բարձրանում ենք, հա բարձրանում ջերմեռանդ ուխտավորի պես. բոլորս էլ համակված ենք դուլթական ամբողջ ժամ առաջ տեսնելու բուռն ցանկությամբ: Սակայն դուռն է հոգնածություն, ծնկներս դողդողում են և կարծես ծալվում: Կանգ եմ առնում մի քանի վայրկյան. հափշտակությամբ դիտում եմ իմ առջև բացված անսման պատկերը՝ իր բազմազան խաղերով ու ակնապարար գույներով:

Իմ ուղեկիցները՝ բնագետն ու ժուռնալիստը զրուցելով առաջ են շարժվում: Բնագետը մեկնում է ձեռքը դեպի հեռուները և ժուռնալիստի ուշադրությունը հրավիրում մի ինչ որ բանի վրա: Նրանցից չբաժանվելու համար բռնում եմ վերելքը, արագացնելով քայլերս: Ժուռնալիստը գլխարկը հանած՝ շարժում է դեպի ինձ որ շտապեմ, հասնեմ իրենց. նրանք արահետից դուրս գալով, կանգնել են մեկուսի և հաղորդում միմյանց իրենց տպավորությունները:

— Հետ մնացիր, բարեկա՛մ, դարձավ ինձ բնագետը, երբ արդեն մի քանի քայլ էր մնում նրանց հասնելու:

— Այո, կանգ առա դիտելու իմ առջև բացված գեղատեսիլ պատկերը, — վրա բերի ես, քողարկելով հետ մնալու բուռն պատճառը՝ հոգնածությունս:

— Իրավացի եք, անսման է բնությունը Հյուսիսային Կովկասում, — զմայլանքով նկատեց ժուռնալիստը. — Ինչով են պակաս մեր առջև բացված թավշապատ բարձունքները Դավոսից, որը աշխարհի բոլոր կողմերից դեպի ինքն է քաշում հազարավոր հիվանդներ:

— Ոչնչով, հարեց բնագետը:

Վերելից ցած նայելիս, պարզորոշ կերպով տեսնում եմ այն կետը, ուր մեր անցած խճուղուն զուգընթաց գետակին միանում է լեռնային մի ուրիշ վտակ: Ահա հենց այդ երկու գետակների միախառնման սեղումն է կատարվել տասնյակ տարիներ առաջ պատահած ողբերգությունը: Թեև այդ օրից անցել են շատ տարիներ և դեպքը մշուշով է պարուրվել, այնուամենայնիվ ամեն մի անցորդ դեռ ցավագին կսկիծով նայում է այն կիսախարխուլ ավրոցին և շարունակում իր ճանապարհը դառն խորհրդածություններով: —

Մտորումների ծփանքների մեջ՝ նայում եմ շուրջս, իմ առ-

ջել ծառայած է անհիթեթ մի ժայռ, սուր ցցվածքով, որ սևակ-
նած արծվի պես նայում է անդունդներին՝ մտասուշյղ ու գըլ-
խիկոր:

Երկարածիգ լեռնաշղթան փոքր առ փոքր ետ է գնում,
լայնանում դեպի ներքև ու բռնում հսկայական տարածություն,
որը թաքցնում է խորհրդավոր մի զրույց և համբուրվում է արևի
ծիծաղկոտ շողերի հետ:

Բարձրանում եմ այնպիսի զառիթափ վերելքով, որ ամե-
նաչնչին անդգուշության դեպքում, կարող եմ կորչել անդունդի
խորության մեջ, ուր անհնար կլինի գտնել մարդու անշնչացած
դիակի հետքն անգամ:

Դեպի «Սիրո և խարդավանքի ամրոցը» բարձրանում է
նաև մի քնքուշ, դեռատի օրիորդ, որի հետ ծանոթացա լեռան
ստորոտում—ավտոմեքենայից իջնելիս: Բնագետն ու ժուռնա-
լիստը բավական առաջ են անցել արդեն, ես և օրիորդը բարձ-
րանում ենք երամից ետ-ընկած թռչունների պես: Գնալով ա-
վելի դժվարանց է դառնում վերելքը, ես ստիպված եմ քարշ
տալ թե իմ անվարժ ոտքերը և թի օգնել դյուրարեկ ուղեկ-
ցուհու:

Նկատում եմ, որ օրիորդն անտարբեր չէ դեպի շրջապատը,
դեպի վեհապանծ լեռներն ու անդունդները, դեպի թավշապատ
մարդերն ու մեղմօրոր ծաղիկները: Նրա սիրտն էլ է թրթռում
այն զդացմունքներով, որ բնությունը դրել է յուրաքանչյուր էակի
մեջ: Նա էլ է ինձ պես դյուլթված այն կախարդական ձեռքով,
որ անհիշելի ժամանակներից ստեղծել է այս հոյակապ ու անգե-
րազանց պատկերը:

Այստեղ, բնության վեհաշուք ծոցում սիրտդ լցվում է ան-
հուն բերկրանքով, հոգիդ թեթևանում ամեն ծանրությունից,
ձուլված ես զգում քեզ այս անպարփակ մեծ ամբողջի հետ,
իրև նրա անանջատ մասնիկը:

*
* *

Սիրելի ընկեր.

Այն սարահարթում, ուր մենք ենք կանգնած, փռված են
երփներանգ անթիվ ծաղիկներ՝ մեկը մյուսից դրավիչ, մեկը
մյուսից գունագեղ: Նրանք իրենց քնքշությամբ, իրենց դուրե-

կան բուրմուռնքով շոյում են հոստոտելիքդ, գերում ողջ էութի թյունդ...

Ձարհուրանքով նայում ենք դեպի ցած, լեռների ահալոր պատռվածքներին, որոնց խոր անդունդներով հոսում են ողբաձայն երկու գետակները, մերթ վրիուր թքելով առափնյա ժայռերին, մերթ գալարվելով ու փայլիլելով արևի տակ, որպես արծաթազօծ ժապավեններ։ Այս երկու գետակների դռում-գոչումը ինձ թվում է ցասկոտ մի բողոք՝ հեռավոր անցյալում պատահած դեպքի համար։

Մոտենում եմ անդունդի եզրին ու սարսափով նայում ցած, ուր գետի ջրերը խելակորույս թափով դալարվում են ժայռերի մեջ, լիզում են ու քերում իրենց վազքը խափանող ավերը, որ շուտ ազատվեն տխուր դեպքի հետ կապված մղձավանջից։— Այդ երկու գետերը դարեր շարունակ մաշել են իրենց նեղ հունը՝ դեպի երկրի խորքը։ Նրանք՝ կարծես խոսք մեկ արած՝ ուզում են կտրել, վերացնել երկրից մեր ոտքերի տակ գտնվող լեռնաշղթան իր ողջ երկարութամբ, որ ջնջեն կատարված ողբերգություն հետքը։

Ջրերը, սակայն, պարտված ու անզոր թափավում են առաջ լաց ու կոծով, իսկ լեռը վերամբարձ ու անխռով պահում է իր բարձունքին հնօրյա ամբողջ և ծաղրում գիրկընդխառն գետերի ապարդյուն ջանքերը... Սիրակարոտ հովիվը և ամբողջ լեռնակալ տիրոջ լուսափայլ աղջիկը վաղուց, շատ վաղուց են փշրվել անդունդից կախ ժայռերի վրա, այնտեղ, ուր միախառնվում են երկու գետերը, իսկ ամբողջ բարձրում մնացել է որպես հուշարձան և անխոս վկա տրագիկ այդ պատմություն։

Երկար չեմ կարողանում նայել անդունդին, աչքերս շաղվում են, գլուխս սկսում է պտտվել, հայացքս ուղղում եմ երկու ահռելի պատռվածքներից այն կողմը, դեպի կապտավուն նոսր մշուշով պարուրված հորիզոնը, ուր գծազրկում է մի այլ լեռնաշղթա, որ ուռուցիկ լանջով դարձած մեր կողմը՝ ասես պարծենում է իր բարձրությունը։ Նրանից այս կողմ երևում է մի ուրիշ՝ ավելի հոյակապ, ավելի գեղադիր։ Այդ վիթխարի լեռները ծնունդ են տալիս բազմաթիվ աղբյուրների, որոնք միախառնվելով՝ կազմում են ահռելի ջրվեժներ, որոնց մանրամաղ ցնցուղ-

Ներքը շողշողում են արևի տակ և ցուցադրում ծիածանի բոլոր ե-
րանգները:

Հափտակված անձեռագործ պատկերով, նայում եմ մա-
սույզ և սքանչանում... Թվում է ինձ, թե կտրվել եմ երկրից ու
Նրա հետ կապված բոլոր հոգսերից, վերանում եմ թեթևացած,
վերանում մինչև աստղերի ոլորտներն անսահման:

* * *

Սիրելի ընկեր.

Գիտեմ, պիտի մեղադրես, որ այսչափ տարվում եմ, ինքնա-
շուռացության մեջ ընկնում, աստվածացնելով բնությունը: Ան-
շուշտ չէիր մեղադրի ինձ, եթե դու էլ հասկանայիր ինձ պես այս
սքանչելի բնության լեզուն: Այո, սրանք բոլորը—թե բազմե-
րանգ ծաղիկները, թե մեղմանուշ աղբյուրները և թե խոր ան-
դունդի մեջ թավալող գետակը—լեզու ունեն և իրենց լեզվով էլ
խոսում են սրտիս հետ, դյուրում հոգիս, կանչում իրենց մոտ...

Իսկ բոլորը տեսնելուց հետո մնում է մի բուռն ցանկու-
թյուն՝ ունկնդրել շուրջդ փափսացող դադանիքին, անհագ ներ-
ծեղ բնության թաքցրած ճշմարտությունը, անդառնալի կեր-
պով միաձուլվել նրա հետ...

Այո, այս ամենը այնքան է ազդում մարդու վրա, որ թը-
վում է ինձ, թե այստեղ, այս հոյակապ բնության գիրկը եկող
մարդկանց քար սրտերը կփափկեն, վրեժխնդրությամբ լցված հո-
գիները կնեղեն, ատելության զգացումով համակվածները կը-
շաշտվեն:

Հեռավոր բարձունքներից գալիս է թևարձակ մեղմ զեփյու-
ռը, շոյում մեր գեմքերը և խորհրդավոր փափսուկով ինչ որ բա-
նեք ասում ականջիս... «Ես գալիս եմ հեռու տեղերից, բերել
եմ հետս բազմերանգ ծաղիկների արբեցուցիչ բույրը, շնչիր
լիթթոք...»:

Անդունդների խորության մեջ հոսում է գետը աղակահույզ,
անգլիմադրելի մոլուցքով բռնված. այդ աղմուկի մեջ էլ լսում եմ
խոսքեր.—«Ես գալիս եմ կապտավուն մշուշով պարուրված լեռ-
ների ձյունապատ լանջերից, բերել եմ հետս մայր հողի կուսա-
պան շերտերից դուրեկան համը այն նյութերի, որոնք դեռ պահ-

ված են երկրի ընդերքում. իջի՛ր, զովացրո՛ւ քո ծառավ հոգին՝
պաղպաջուն ջրերով...։

Ինձնից ոչ հեռու մի քանի ծառ երեկոյան մեղմ հովի տակ
օրորվում են նազանքով, իրար փարվում և փսփսում խորհրդա-
վոր։ Թվում է, թե նրանք ինձ են կանչում տերևների քաղցը
սոսափով։

— Եկ մեզ մոտ, նստիր շվաքում, մենք կզովացնենք քեզ-
տեսնում ենք, որ հոգիդ զգայուն է, հնօրյա ողբերգություն-
նը խոցել է սիրտդ...

Ես մոտեցա մտասույզ ու հարցրի նրանց.

— Ասացեք խնդրեմ, ինչո՞ւ է այս շենքը «Միրո և խար-
դավանքի ամրոց» կոչվում։

Մեղմ սոսափի մեջ լսեցի տխուր մրմունջը ծառերի։—

— Տեսնում ես այն ժայռը, որ թեքվել է դեպի ցած և
գլուխը քարշ նայում է ահռելի անդունդին. նա գիտե բոլոր
անցողաբձը, դիմի՛ր նրան, նա կպատմի եղելությունը մեկ
առ մեկ։

Լարված հետաքրքրությամբ նայում եմ այս կողմը՝ վի-
րամբարձ լեռան կողերից պոկվել, ընկել են ներքև վիթխարի
ժայռեր, կազմելով անհեթեթ մի բլուր։ Լեռան կատարը թեք-
ված է դեպի անդունդը, նայում է ցած՝ մոռյալ, ակնապիշ։

Հասկանում եմ թե ինչու է հսկա ժայռը ներքև նայում.
լուռ ու անթարթ նա նայում է այն քարաբլուրին, որի վրա
խավար անցյալում փշովեցին իր կատարից նետված սիրակա-
րոտ հովիվը և ամրոցի տիրոջ գեղատեսիլ ալջիկը։ Ժայռն ա-
վելի զգայուն է ու կարեկից, քան ամրոցի ոխակալ տերը, որ
խորտակեց երկու ծաղիկ կյանք։— Այն օրից անցել են շատ
տարիներ, բայց ժայռը նայում է անվերջ, նայում ու ողբում,
ասես, սիրո և խարդավանքի անբաղդ զոհերին։

— Խոսի՛ր, ժայռ, բաց արա իմ առջև գաղտնիքը երկու
սիրտտենչ կյանքերի և դառնակսկիծ վախճանը նրանց։ Զե-
որ տեսել ես ու վկա եղել։

Ժայռը կարծես դանդաղորեն բարձրացրեց գլուխը և լե-
զու առած՝ սկսեց պատմել զեպոքը վաղեմի: Պատուեց, ասեց,
տարիների թանձր մշուշը և իրողությունն իր ողջ մերկությամբ
պատկերացավ ինձ:

1933 թ.

Կիսլովոդսկ

Մ Ե Տ Ե Խ Ո Ւ Մ


(Տպավորություններ եւ մտորումներ հին օրերից)

Թբիլիսիի կենտրոնական թաղերից մեկում, Քուռ գետի առափնյա սլացիկ քարաժայռերի վրա կանգնած է հինավուրց պատմական ամրոցը—Մետեխի բանտը։ Նա իր ահռելի բարձրությունից իշխում է շրջապատի վրա և մռայլ, անհամբույր դեմքով նայում իր ոտները լիզող գետի պղտոր, ողբակոծ ջրերին։

Վաղուց ի վեր կամենալով մոտից ծանոթանալ մարդկանց արյունով կառուցված այդ հինավուրց ամրոցին, վերապրել նրա արևազուրկ, մռայլ կամարների տակ հյուժված հարյուրավոր լավագույն դադափարական դեմքերի կրած տանջանքները, ես քայլերս ուղղեցի դեպի նրա գորշ պատնեշները, որոնք խոժոռ հայացքով նայում էին իրենց շուրջը շարժվող ու խլրտացող մարդկանց։

Դանդաղ ու մտախոհ մոտենում եմ լայնանիստ, երկփեղկ դռներ և տարակուսանքով կանգ առնում։ Մի ինչ որ անբացատրելի զգացմունք խեղդում է կոկորդս... Անցյալի հետ կապված մռայլ պատկերները շարեշար գալիս անցնում են աչքիս առջևից։ Քանի-քանի անգամ լավագին մահագուշակ ճոխնչով բացվել են այդ դռներն ու ներս առել ճնշված, հարստահարված, մարդկության լուսաշող հեռանկարներով ապրող պողպատական դեմքերը,—անցնում է մտքովս։

Անդրկովկասի աշխատավորությունը գիտե, ճանաչում է այդ դեմքերը, որոնք պայքարել են հանուն նրա լավագույն օ-



գերի և որոնց պատկերը նա վառ է պահում իր հիշողության մեջ:

Անօրինակ մի սարսուռ անցավ ողջ մարմնովս, երբ հոգեխռով այդ մտորումներով տարված՝ ներս մտա բազը, ուր մի քանի ծառեր, աշնանային անձրևի տակ գլխահակ, մեղմաշունչ, ասես, հնօրյա մի զրույց էին պատմում միմյանց:

Օհ, այդ ծառերը... որքան անցքերի են ականատես եղել, որքան են սարսուռացել իրենց շուրջը կատարված եղեռնից... ասիսոս, ասիսոս են, չեղու չունեն, որ այցելուին պատմեն իրենց տեսածներն ու լսածները:

Եթե նրանք լեզու ունենային, կպատմեին, թե ազատության համար պայքարողներից որի կյանքն ինչպես է փայլիլել ու հանգել, քանի-քանի այրվող ու մխացող սրտեր են թաղված խոնավ, ջրակլարած ներքնահարկերում... զրա՛նք, այդ ծառերն են եղել հիշրայի սեղմված ճիրաններում թփրտացողների միակ սփոփանքը. նրանք են վառ պահել զբախ աշխարհի հետ կապված հուշերը, նրանք են ողբացել տառապյալների անհուն վիշտն իրենց տերևների շրջյունով: Նրանք սեռել են սեղմված բուռնցքներ, կրկնօտ հայացքներ, ունկնդրել են տասնյակ շշուռներ, որոնք թրթռացել ու մարել են այդ փակ պարիսպների մեջ:

Գարնան արևաշող օրերին, երբ բռնության զոհերին դուրս են բերիլ մեկուսարաններից, արտասվող նկուղներից, նրանք նստել են այդ ծառերի տակ ու խորհրդավոր փսիսուկով կամ նշանացի ակնարկներով իրենց անելիքներն են ուրվագծել, իսկ ծառերն ունկնդրել են նրանց զրույցին, ապրել նրանց փոթորկված հոգու խոր կսկիծները...

Թափվում է աշնան մանրամաղ անձրևը, կարծես սրտիս հետ մեկտեղ լալիս է մոխրագույն երկինքը:

Ընդհանուր ամայության վրա իշխում է գերեզմանային գույքունը: Այդ ամայության մեջ իմ գոյությունը թվում է ինձ իբրև մի սովեր, որ շրջում է տառապած հոգիների աշխարհում՝ իրեն այրող հարցերի պատասխանը գտնելու:

Դուրեր շարունակ ամբողջի զոհերը միշտ փակ են եղել, ոչ ոք հոժարակամ ներս չի մտել այդ դռներից, բացի բանտարկյալների հարազատներից, որոնք, ատամները սեղմած, մղկտացել են դարձափ մոտ, ենթակա քարասիրտ պաշտոնյաների ծաղ-

քանքին: Որքան հողիներ են տառապել, որքան սրտեր են մը-
խացել, որքան արցունք է թափվել դալուկ զեմքերից:

Քարե մի սանդուղք տանում է դեպի վեր: Ես բարձրանում
եմ այդ սանդուղքով և իմ առջև հայտնվում է եկեղեցին, որը
կառուցված է բլրաձև բարձրության վրա: Մեծ ու լայնահիստ
դռնով մտնում եմ ներս, ուր անմիջապես աչքի է ընկնում ճար-
տարապետի ձիրքն ու շնորհքը: Պատերը հաստահիմն են ու
զանգվածային, իսկ հաստ սյուները խոյանում են դեպի վեր:
Հատ վեր: Պատերի վրա քանդակված են կամ նկարված հին
արվեստագետների գործերը, որոնք հիացմունք են պատճառում
այցելուին:

Բանտարկյալների մեջ եղել են արդյոք հավատացյալներ,
աղոթել են արդյոք այստեղ և երբ աղոթել են, ինչ է եղել նը-
րանց խնդրանքը՝ գոյություն հունեցող աստծուց. թողություն
իրենց մեղքերի համար, թե՞ ազատություն՝ այս խեղդող մթնո-
լորտից, ուր թալրտացել են նրանք վանդակում փակված թըռ-
չունի նման:

Բայց միթե հանցավոր են եղել այս օղակող պատերի մեջ
ընկածները: Ինչ է եղել նրանց հանցանքը, — գողություն, մար-
դասպանություն, թե պայքարը մարդկային կամքն ու ազա-
տությունը ճնշող բռնակալության դեմ: Չէ՞ որ այդ բոլորը
արդյունք են եղել սոցիալական դաժան անարդարությունների,
տիրող կարգերի և օրենքների, որոնք կապարի ծանրությամբ
իջել էին ճնշվածների ու հարստահարվածների վրա:

Մտնում եմ ներս և ուշադրությամբ դիտում եմ այդ եկե-
ղեցու խուցերը:

Խորասուզված մտքերիս մեջ՝ անցնում եմ այն խուցը,
որտեղ հանգչում է դարեր առաջ այստեղ թաղված աճյունն այժ-
մարդու, որը առաջին տանջվածն ու առաջին զոհն է եղել այս
բանտում: Նա զոհվել է այն օրերին, երբ բռնություն էր գոր-
ծադրվում նաև մարդկային սրտի ու կամքի վրա: Մահվանից
հետո ամուսինը՝ Վարսէն բղիշկը զղջացել է իր կնոջը պատ-
ճառած սոսկալի տանջանքների համար և խիղճը հանգստացնելու
նպատակով կառուցել է այս հոյակապ եկեղեցին:

Այդ նույն խցի մեջ, աջակողմյան սեղանի վրա, ապակյա
պահարանում գտնվում է մի զեղեցկուհու նկար: Տաղանդավոր

նկարիչը գեղեցկուհուն նկարել է պառկած դիրքով, քնած: Դա նկարն է Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկի, որի ուկորները հանգչում են հենց այստեղ, ուր կանգնած եմ ես: Վարսէն բղելիւր զղջացել է իր գործած բռնութիւնների համար, իսկ Ռոմանովները միթե չզղջացին այն զոհերի համար, որոնց մաշում, փտեցնում էին այս գորշ պատերի մէջ:

Ծրջում եմ հորդ անձրևի տակ, որ հետզհետե մտրակում է կուրծքս: Ամբողջ ամրոցում մենակ ես եմ շրջում, անձրևի պատճառով ուրիշ այցելուներ չկան:

Ընդհանուր ամայութեան մէջ մի տեսակ սարսուռ է անցնում մարմնովս: Ամեն տեղ նկատելի են հաստատուն կամարներ, լայնանիստ ու անխորտակելի պատեր: Շուրջս տիրող քար լուծիւնը խզվում է միայն տեղացող անձրևի ձողիչունով: Թվում է թե գտնվում եմ լիովին ամայի մի գյուղում, որի բնակիչները փախուստի են դիմել ներխուժող թշնամու սարսափից:

Տեսա, որ մեկը դուրս է գալիս ներքնահարկ նկուղից: Նա բարձրացավ քարե սանդուղքով և բակի ձախ կողմից դիմեց դեպի երրորդ կորպուսի ետեը: «Երեի նա էլ ինձ նման հետաքրքրվող այցելու է, եկել է դիտելու արդեն պատմութեան սեփականութիւնը դարձած՝ աղատութեան գաղափարներով վառվող մարդկանց այս երբեմնի տանջարանը», անցավ մտքովս: Որքան կուգեի, որ գտնվեի մեկը ու ինձ ծանոթացներ այս կամերաների հետ, պատմեր, թե որ կամերայում թվ է նստած եղել:

Մտնում եմ մի կամերա՝ լի շղթաներով, որոնց զրնգոցը ես լսել եմ դեռ ցարերի տիրապետութեան օրերին: Այժմ, սակայն, այդ շղթաները թափված են ժանգապատ:

Բանի-քանի ագնիւմ հոգիների թուխքն են կաշկանդել այս շղթաները: Միտքս թե առած սլանում է դեպի հետ, անցած տարիները խորքը: Մշուշի խաւարը փարատվում է և իմ առջև պատկերանում է մի տիւրը դեպք:

Հիշում եմ, ցարական իշխանութեան ժամանակ մի անգամ անցնում էի Մետեխի մոտակա փողոցներից մեկով: Տեսա դեռատի մի աղջկա, որը ներքեից նշանացի խոսում էր բանտի լուսամուտից նայող իր եղբոր հետ: Եղբայրն անփորձ էր, բանտի օրենքներին անծանոթ, լուսամուտի վանդակապառին կպած՝ խոսում էր տենդային շարժումներով: Պահակը սուլեց, սուլեց

երկրորդ անգամ և ահարկու շիշտը թրթռաց օդի մեջ և մեռավ խակույն պարիսպների տակ: Ծայթեյ հրացանը և գնդակը այրեց ճակատը երիտասարդի: Նրա գլուխը թեքվեց ու չքացավ... Դեռատի աղջիկը ցնցվեց և ճշաց սոսկալի ծորտացով:

Կամուրջի վրա ծփում է տաբուր, խռնվում, կուտակվում են ճաղերի մոտ մարդիկ՝ այլալված դեմքերով, նայում ներքե, ուր պզտոր ջրերը ծառս են լինում իրենց վաղքը խափանող ժայռերի և ուղղաձիգ պատնեշների դեմ, գալարվում, պտույտներ կազմում, ապա խուլ վաղքով փշրվում կամարների տակ: Բարձրանում են նոր կոհակներ, կազմվում նոր պտույտներ, որոնց մեջ տաբուրերվում է մի գեղ: Ամբարտակների մեջ խեղդված ջրերն ասես պար են բռնում նրա շուրջը, խուլահան վշշում, ծափ տալիս և ճգփոցով զարնվում նրան, փշրվում նրա շուրջը, ծածկում դեմքը գունաթափ, որի վրա նշմարվում են հազիվ մարած աչքերը, իրեւ հանգած երկու կտոր ածուխներ...

— Օգնեցեք, ջահել աղջիկ է, օգնեցեք,— լավեյ մի ձայն ամբողջի միջից, ապա տիրեց քար լուսթյուն: Սեվեռուն հայացքով նայում են ամենքը մոլեգնած ջրերին, նայում են ակնապիշ և որոնում կոհակների մեջ չքացած դեմքը:

— Օգնեցեք, խեղդվում է աղջիկը.— լավեց կրկին մի խորոխտ ձայն, երբ ջրերի վրա սին տալով նորից երևաց հերարձակ գլուխը:

— Ծանապա՜ւհ,— գոչեց մկանուտ մի երիտասարդ և կամբըջից նետվեց հորձանքների մեջ: Չանցած մի րոպե նրան հետեվեց շիկահեր, ջրուտ մի երիտասարդ, որի ճերմակ մարմինը գծաղրվեց օդի մեջ ու չքացավ հորձանուտներում: Կամրջի ճաղերը դողում էին խռնված ամբողջի ճնշումից:

— Կորան, տղերքը կորան,— դարձավ տաբիքավոր մի մարդ իր մոտ կանգնածին:

— Չեն կորչի, հալալ է նրանց կերած կաթը,— առարկեց հարևանը, որի կնճիռներով ակոսված դեմքի մկանները կծկվում էին զուսպ ջղայնությունից:

— Հրեն, հրեն, երևում են տղերքը,— ձայնեց դեռատի մի տղա, մատը պարզելով դեպի թշնացող ջրերը, որոնք գալարվում էին հուզված և հրելով միմյանց՝ օղակ-օղակ զարնվում լոթորդներին:

Կռվի էին բռնվել լողորդները տաբերքի դեմ, պատռում

էին ջրերը, նետովում առաջ հոսանքն ի վեր կողք-կողքի, սուզ-
վում ջրապտուկտների մեջ. չքանում, կրկին՝ հայտնվում, որպէս
շուրջ-կետեր, Լոգորդները մի քանի վայրկյան երևացին գե-
տափի թեքվածքում և չքացան:

Բազմությունը լարված հետաքրքրությամբ դիմեց դեպի
երկարաձիգ փողոցը, որ տանում է դեպի աջ գետափը, Մետեիի
հանդիպակաց կողմը:

Այդտեղ վերջանում են գետի ջրերը պարսպող ժայռերն ու
շենքերը, թույլ տալով, որ գետը փռի իր թեւը ցածրադիր ափի
տեղդությամբ:

Միմյանց հրելով վազում, գետափն են իջնում մարդիկ,
քնդհանուր ժխորի մեջ լսելի են դառնում խրախուսանքի ձայ-
ներ՝ ուղղված լոգորդներին, որոնք, մաքառելով ջրերի հետ, լո-
ղում են դեպի ափը, լողում են ու ժառաղա՝ քաշ տալով ջրերի
վրա տարուբերվող դիակը ջանել աղջկա: Հեռզհետե աղմուկը
մեղմացավ, ձայները խզվեցին ու տիրեց օրհասական վայրկյան-
ներին հատուկ քար լուսթյունը: Համատարած լուսթյան մեջ
զսվում էին մեկի կամ մյուսի սրտից պոկված հառաչանքներ,
կարեկցական բացականչություններ և ափերին զարնվող կոհակների
ձողփյուն...

Հետաքրքրությունը՝ միացած սարսափի հետ՝ առաջ մղեց
ամբոխի վերջին շարքերը. մարդիկ անդիմադրելի ակիքով շարժ-
վեցին ափի երկարությամբ:

— Հալալ է ձեր կերած կաթը,—գոչեց միջին տարիքի մի
մարդ, երբ լոգորդները արդեն մոտեցել էին ափին:

Ամբոխը ծփաց՝ կրկին ետ մղելով վերջին շարքերը, Լոգորդ-
ները, կանգնած առափնյա ջրերի մեջ, շնչում էին դժվարու-
թյամբ, սպրդնել էին ու կապտել: Երկուսի մեջ տարուբերվում էր
աղջկա մարմինը, որի շրերից բռնել էին նրանք: Ապա-
կեփայլ աչքերի մեջ գծագրվել էր մահվան հետ կապված սար-
սափը, իսկ շրթունքներին սառել նզովքն ահալոր—ուղղված
տիրող կարգերին, ցարական ուժիմին...

Անցան րոպեներ, ծանր, հոգեմաշ ապրումների րոպեներ,
երբ մարդկային միտքը քարանում է և զգացմունքները հորդում
են վարարած ջրի նման: Տիրել էր ընդհանուր լուսթյուն, ա-
մենքն խնքնամփոփ մտորում էին արագիկ պատկերի հանդեպ:
Պոսքը, որ ամենաթանգ պարզն է մարդու համար, պակասում

է այդօրինակ վայրկյաններին, և դա հասկանալի է. չէ՞ որ խոսքն անզոր է մեղմելու ներքին հուզմունքը: Դեռատի աղջկա դիակն օրորվում էր ջրերի վրա՝ երկու լողորդների միջև, անտարբեր և անզգա դեպի շրջապատը, դեպի ամբոխված բազմությունը, որը շրջապատել էր այդ վայրը լոկ հանդիսատես լինելու տխուր դեպքին, լոկ բավարարելու իր հետաքրքրությունը մարդկային: Բայց չէ՞ որ մի քանի ժամ առաջ զգացմունքն ու հույսերն էին օրորում այդ աղջկան. չէ որ այդ անբացատրելի զգացմունքին զոհ գնաց եղբայրը՝ վերում՝ ամրոցի կամարներում, իսկ ինքը՝ վարում, փրփրացող կոհակների մեջ:

— Խեղճ աղջիկ, տեսնես, ինչու իրեն գետն է գցել, — շշնջաց մեկը կարեկցությամբ:

— Մեր լավ օրից, — վրա բերեց կոշտացած ձեռներով, թիկնավետ մի մարդ, — քանի դեռ կա բռնակալություն, բանտ, այդպիսի զոհեր դեռ շատ կունենանք և սա հերթական զոհերից մեկն է միայն. շատ է ծանրացել կյանքը, շատ է նեղացել տեղներս: Վերջին խոսքերն արտասանելիս նա ջղաձգորեն սեղմեց բռունցքը...

— Յարաբ ի՞նչ ցավ ունիւր այս ջահել աղջիկը, — դարձավ կարճահասակ, ոսկրացած դեմքով մի ծերունի իր մոտ կանգնածին.

— Սիրահարված կլինի հալածւթ. — պատասխանեց մեկը հեգնանքով:

— Սխալվում ես, բարեկամ. այդ աղջիկը փողոցից խոսում էր բերդի լուսամուտին կպած իր եղբոր հետ, երբ պահակը երկու անգամ սուլելուց հետո կրակեց, եղբոր գլուխը թեքվեց ու չքացավ վայրկենապես... Դուքը ճշաց սոսկալի ծղրտոցով, քարացավ տեղում մի քանի բոպե և մազերը պոկելով անհայտացավ անցուղարձ անողների մեջ, — պատմեց դեպքին ականատես մեկ իրիտասարդ:

— Կխորտակենք բերդերը, հիմնահատակ կանենք բանտերը — զսպված ցատումով մռնչաց թիկնավետ մարդը և բռունցքը սեղմած հեռացավ:

Ես ակնապիշ հայացքով ճանապարհ դրի նրան և թվում էր, թե նրա խոհուն դեմքը վաղուց ծանոթ է ինձ, բայց որտեղ էի տեսել և ինչ առիթով, դժվարանում էի հիշել:

— Ո՞վ էր այդ մարդը. — հարցրին ներկաները միմյանց:

— Բանվոր է մի մեծ գործարանի, — պատասխանեց խոսա-
գիցներն ից մեկը՝ բեխերը ոլորելով:

Հը՛մ. — ծո՛ր տվին բոլորը՝ խորհրդավոր եղանակով:

Ով իմանա, գուցե այդ երիտասարդն իր տվայտալից
կյանքի բանտային շրջանն անց է կացրել հենց այն կամերա-
յում: Ով է իմանում, թե այս շղթաներից որի մեջ է տառապել
նրա ազատ կյանքը՝ երբը հոգում: Ով իմանա, գուցե հենց այն
նեղլիկ լուսամուտից էր նայում նա իր քրոջը՝ անհուն կարոտն
աչքերի մեջ:

Փոքրիկ պատուհանից վախվխելով ընկնում է լուսի մի նեղ
շերտ: Մոտենում եմ այդ պատուհանին և նայում հեռու՝ դեմը
բացվող պանորամային: Ներքև, ահռելի խորության մեջ Գուռն
է հոսում իր պղտոր ջրերով, որոնք դարեր շարունակ լիզում են
ուղղաձիգ, սեպ ժայռերն ամրոցի և լալագին թավալվում առաջ:
Նեղ լուսամուտից նայում եմ վշացող ու ողբասաց գետին...
Նրա ջրերն անգույն, անգաղար զարնվում են բերդի փեշերին ա-
հեղ ցասումով ու փշրվում իրենց ցասման մեջ: Գետը սեղմվում է,
փրփրում մոլեգնորեն, խորտակել է ուզում վերամբարձ ժայռե-
րին թառած ամրոցը, ուր հյուծվել են երկաթե կազմվածքներ,
մաշվել են բոցավառ սրտեր...

Դետի կատաղի հորձանքներն աղմկելով զարնվում են ժայ-
ռի կողերին և փշրվելով ընկնում հետ: Եվ թվում է ինձ, թե
այժմ ել գետի տարուբերվող ալիքների մեջ տեսնում եմ այն
աղջկա քեմքը:

Դետը հոգնած անզոր պայքարից՝ փռում է իր թևը հան-
գիպակաց ափի ուղղությամբ, նորից սեղմվում, քերում, մաշում
է փեշերը բերդի ու գաղաղելով առաջ ընթանում: Եռում են
ջրերը խորքից, լսվում են խորհրդավոր ձայներ, լսվում է բո-
ղոք ու տրտունջ:

Ջրերի խուլ-խեղդված ձայները հիշեցնում են հույզերն այն
հերոսների, որոնց գալիքի երազն է օրորել:

Նրանք այստեղից, այս լուսամուտից դիտել են, անշուշտ,
գետի խորությունը և համեմատել իրենց սրտի ու ապրումների
խորության հետ: Նրանք իրենց հույզերն ու իղձերը հանձնել
են գետին, որ գնա պատմի հեռու ափերին: Լսել է գետը նրանց

մորմոքը և իր ընթացքի հետ տարել նրանց վիշտը աշխարհին
սլափմեկու:

Ծանր ու ճնշող զգացմունքով թողի կամերան: Ներքին
սարսուռով ու խորասուզված մտքերի մեջ, թողի ամբողջը մռայլ
դարերի:

1939

Թբիլիսի


Մ Ո Ր Վ Ր Ե Ժ Ը

Հայնաձախալ հեռաստանի մի անկյունում, անտառի եզրին փոփում էր գյուղը: Նրա կողքով, անբաժան քրոջ նման հոսում էր Հաբ գետը: Գյուղի ծալքին՝ բլրակի վրա չքնաղ պարտեզով բոլորված մի նորաշեն տուն կար, որի պատշգամբի տակով խայտում էին գետի ծիծաղկոտ ալիքները: Տունը երկու լուսավոր ու ընդարձակ սենյակներ ուներ, որոնց պատուհանները նայում էին պարտեզին: Այնտեղ ճաշակով տնկված ու խնամքով աճեցված պտղատուների մեջ փոփում էր մի գողտրիկ ծաղկանոց՝ լի երփներանգ ու բուրուժնալից ծաղիկներով: Նա այնպիսի հմուտ թյամբ էր ձևավորված, որ ասես տաղանդավոր նկարչի աշխատանք լիներ:

Այդ ծաղկանոցը Սեմյոն Կոխլովի կնոջ՝ Օլյայի ժրաջան ու քրտնաթոր աշխատանքի արդյունքն էր:

Բնությունն Օլյային օժտել էր ոչ միայն շնորհքով ու ճաշակով, այլև գրավիչ արտաքինով: Նրա երկնագույն աչքերը, ձկուն ու սլացիկ մարմինը ներգաշնակում էին բնավորությանը: Նա հեղ էր ու բարի, համեստ ու ծանրաբարո, խելոք ու լըրջամիտ:

Վաղուց չէր, ինչ Օլյան վերադարձել էր քաղաքից՝ համալսարանն ավարտած և իր ձեռքն առել մատաղ սերնդի դաստիարակության գործը: Նա սիրեց և իր կյանքի ընկեր ընտրեց եռանդուն ու բանխմաց մի երիտասարդի՝ տրակտորիստ Սեմյոնին, որը լավ ձիավարել գիտեր, անվրեպ կրապել, թուր խաղացնել: Կոխլովի աչքն էր Սեմյոնը՝ բոլորի սիրելին, թե ու թիկունքը՝ Դեռ վաղ հասակից Օլյան ու Սեմյոնը թափանցել էին միմյանց հոգու խորքը, զննել նրա բոլոր անկյունները, հասկացել իրար: Երբ մեծացել էին, Օլյան ավարտել էր ուսումը, իսկ Սեմյոնն



արժանացել շրջանի լավագույն տրակտորիստի հռչակին,
ամուսնացել էին, նոր տուն կառուցել գյուղի ծայրին, հաշտ ու
խաղաղ կյանքով ապրել ու վայելել իրենց արդար վաստակը:

*
* *

Հունիսյան պայծառ առավոտներից մեկն էր, երբ ռադիոն
գուժեց պատերազմի լուրը: Ողջ գյուղն ասես տեղահան եղած
շարժվեց դեպի զորամասերը, այնտեղից էլ՝ ճակատ:

Սեմյոնը համբուրեց իր կնոջն ու մանկան, ձի նստեց, ա-
պա մի կարոտալի հայացքով նայեց տանը, կնոջն ու որդուն:
Այդ լուռ հայացքն ավելի շատ բան ասաց, քան պերճախոս լե-
զուն կասեր:

Հայրենիքը, հայրենի օջախը, այդ օջախի ծուխը պետք էր
պաշտպանել: Գնում էր, կազակը գնում էր կատարելու իր
պարտքը:

Սեմյոնը ձիու գլուխը շուռ տվեց: Ձին վիզը թեքելով ա-
վանջները խլշեց, նայեց տան բակի կողմը, հետո բաշը թափ
տալով սլացավ առաջ: Խելոք կենդանին ևս կարծես հրաժեշտ
տվեց մեացողներին:

Երբ Սեմյոնն անցնում էր հայրենի գյուղի դաշտերով,
մարդաբոյ, ալեծածան արտերն իրենց օրորվող հասկերի ոսկեզօծ
գլուխները կախած, մի գաղտնի սարսափով շնչում էին իրար
ականջի. «այս հւր, հւր են գնում... բա մենք... հիվ պիտի քաղի
մեզ...» նրանք ասես զգում էին մոտալուտ վտանգը, ասես զգում
էին, որ հեռու արևմուտքից իրենց անկշտում երախները բա-
ցած հրեշներ են գալիս, որոնք այրելու, խժռելու են մինչև վեր-
ջին հասկը...

*
* *

Գյուղը գրավող գերմանացիներն իրենց արնախում ոհմա-
կից մի քանի տասնյակ հոգի թողել էին այնտեղ ու առաջ
անցել:

Կյանքն ասես մեռել էր. չէր լսվում ոչ երգի, ոչ նվագի
ձայն: Չկար խնդության ոչ մի նշույլ. մարդիկ շարժվում էին
ուրվականների նման: Շատերն օրերով մնում էին կիսաքաղց.
ամենուր թագավորում էր հեծեծանքն ու հառաչանքը: Թափուր

ու կիսավեր տներն արդեն չված թռչունների բներ էին հիշեցնում:

Գիշեր էր, մութ ու խավար գիշեր, մեկն այն տափաստանային գիշերներից, երբ մատդ մարդու աչք կոխեր՝ դժվար թե նկատեր: Այդ համատարած խավարում պայծառորեն վառվում էին միայն Սեմյոն Կոնյովի տան լույսերը: Նրա գուլգ սենյակների պատուհաններից լույսի այնպիսի առատ խուրձեր էին հորդում դուրս, որ կարծես ներսում հրդեհ էր բորբոքվել:

Ինչ-որ մարդիկ անհանգիստ ել ու մուտ էին անում, իրենց հետ տանելով քաղցրահամ խորտիկներով, մեղրածոր գինու և լիկյորի շշերով լի սկուտեղներ: Ներսում մի այնպիսի սեղան էր բացված, որի վրա կարելի էր գտնել աշխարհի ամենաբազմաբան բարիքները: Սեղանի շուրջը նստել էին գերմանական սպաներ և մի գնդապետ՝ գլուխն ու երեսը խնամքով սափրած մի գերուկ ծերունի, որի փքված այտերը թթխմորի պես կախ էին ընկել դեպի ծնոտը:

Թեժ խրախճանքի մեջ էին գերմանական սպաները... Նրանցից յուրաքանչյուրի մոտ զրված էր մի դատարկ աթոռ: Դա նշան էր, որ նրանք ինչ-որ հյուրերի էին սպասում: Սենյակին ամբողջապես ողողված էր ծխի ու գողորշու ամպով:

Շուտով դուռը լայնորեն բացվեց, և զինվորները հրելով հրմշակելով ներս բերին մի խուսբ գերի կանանց: Սպաները իսկույն ոտքի կանգնեցին: Իր գիրուկ մարմինը հազիվ բարձրացնելով, տեղից վեր ելավ նաև գնդապետը: Նա իր հաստիկ ձեռքերով սեղանին հենված, ասես պատրաստվում էր ճառ ասելու: Հետո նրա վավաշոտ հայացքը սահեց կանանց երեսով, որոնց վրա սրտմտանքից ու զզվանքից բացի ոչինչ հնարավոր չէր կարգալ: Գնդապետի հայացքը կանգ առավ դուռնի մոտ սառած մի բարեկազմ կնոջ վրա, որն իր փարթամ կրծքին ամուր սեղմել էր հիվանդ մանկան բարուրը: Դա Օլյան էր՝ տան տերը: Սեփական տունը նրա աչքին այնքան օռորացիլ, խորթացե էր, որ նա իրեն զգում էր դժոխքի տանջարանի մեջ:

Գնդապետը նշան արեց: Զինվորներից երկուսը մոտեցան Օլյային: Կինը փորձեց դիմադրել: Սակայն նրանցից մեկը մանկան բարուրը խլեց նրա գրկից, շարժեց մահճակալի վրա, իսկ մյուսը նրան հրելով տարավ դեպի գնդապետը: Զերմությունից վառվող մանկան թույլ նվնդը կորավ հարբած սպաների աղա-

դակի մեջ, որոնք, գնդապետի ավարը անպահով համարելով, քաղցած գաղանհների պես խուժեցին դեպի կանայք՝ յուրաքանչյուրն իր համար ընտրություն կատարելու:

Խրախճանքը վերսկսվեց: Գնդապետն իր գեր ազդերի վրա գրեթե ուժով պահում էր Օլյային և հանդարտ ձոձում նրան: Օլյան մերթ ընդ մերթ պոկվում էր նրա բազուկներից ու հուսահատ ցնցումներով դիմում դեպի մանկան բարուրը: Սակայն ղեռ տեղ չհասած, սպաները բռնում էին նրան ու հարվածելով տանում դեպի գնդապետը:

Գիշերն արդեն կիսվել էր, երբ հարբած սպաներից յուրաքանչյուրն իր զոհին փռած տարան հարևան սենյակը, թողնելով միայն գնդապետին ու Օլյային:

Դժվարությամբ բարձրանալով բազկաթոռից, գնդապետը մի ձեռքով գրկեց Օլյայի մեջքը, քարշ տվեց դեպի անկյունում դրված գորգապատ թաղթը: Փորձված գայլն իր զոհին գցեց թաղթի վրա, իսկ ինքը նստեց նրա մոտ:

Օլյայի ալյալված աչքերի հայացքը մի առարկայից դանդաղորեն սահում էր դեպի սյուսը: Գնդապետը սքանչանում էր նրա գեղեցիկությամբ: Նա իր արնալից աչքերով նայում էր Օլյայի կախարհիչ աչքերին, դալիլության մեջ անգամ իր թարմությունը պահպանող այտերին: Իսկ երբ նա դիմային քրքիջով ձեռքը մոտեցնում էր նրա կրծքին, կինը դաժանորեն դիմադրում էր ու ճգնում ազատվել նրա զրկախառնությունից: Մեղունին նման էր այն անոթի գայլին, որ վանդակի մեջ գառ տեսնելով՝ մոլեգնած հասնում է նրան, բայց իր ժանիքները փշրում երկաթե ձողերի վրա:

Օլյան անձնատուր չէր լինում: Նա գտել էր գնդապետի թույլ կողմը: Ամեն անգամ երբ վերջինս իր քրտնաթոր դեմքը ջանում էր մոտեցնել կնոջ երեսին, կինն իր զզվանք արտահայտող ազդու աչքերով մի այնպիսի թունալից հայացք էր մխրձում նրա աչքերի մեջ, որ գնդապետը ակամայից ցնցվում էր, այլալույս. նրա մարմինը պատող սառը քրտինքն ասես հանգչում էր նրա կրքի խարույկը: Կնոջ հանդգնությունը կատաղեցրեց գնդապետին: Նա կորցրեց իրեն: Այն պահին, երբ նա իր հերթական ճիգն էր գործ դնում կնոջը հնազանդեցնելու, հանկարծ սենյակի մեջ լսելի դարձավ մանկան ձայնը: Թույլ ու անուժ էր այդ ձայնը, բայց նրանից գնդապետը պահ մի սարսուռ զգալով:

ձեռքը տարավ դեպի ատրճանակը: Նրան ոչ թե սարսափեցրեց սոսկ մանկան ձայնը, այլ այն, որ իր գտնված սենյակում, իրենից և Օլյայից բացի, կար նաև մի ուրիշը, թեև մանուկ, բայց... թշնամի... շուտով նա հավաքեց իրեն և հանգստացավ: Սակայն իր զինվորական կարյերայի ընթացքում միշտ ուժերի գերակշռությունը գնահատած գնդապետին մանկան ներկայությունը անախորժ թվաց: Նա տեղից վեր ելավ: Օլյան բնազդական երկյուղից փորձեց նրանից առաջ նետվել դեպի մանուկը: Բայց գնդապետը մի ձեռքով բռնեց նրան, մյուսով ատրճանակն ուղղեց դեպի մանուկը:

Լսելի դարձավ մի ուժեղ պայթյուն, ապա կանացի մի սուր ճիչ: Հարևան սենյակի դռնից գլուխը դուրս հանեց մի երիտասարդ սպա և իմանալով բանի էությունը, ժպտաղեմ ետ շրջվեց ու դարձավ յուրայիններին.

— Հանգստացեք, պարոնայք, ինցիդենտն ավարտված է... — հետո նա կրկին փակեց դուռը:

— Սյդ ինչ արիր, հրեշ,— աղաղակեց Օլյան:

— Լռիր, թե չէ քեզ էլ կուղարկեմ նրա մոտ, — մռնչաց գնդապետը:

Օլյան կտրված ծափի նման երերաց ու տապալվեց գետնին:

Նա մեկ էլ ուշքի եկավ գնդապետի ժանիքների սուր խայթոցից և իրեն գտավ թաղթի վրա: Նա իր արտասովոր աչքերի հայացքը բևեռել էր առաստաղին: Նա լուռ էր: Սյդվիսի լուռությունը շատ բան է սովորեցնում մարդու և սովորեցնում է զարմանալի արագություն: Սյդ լուռությունը նման է գետնի խորքում մոլեգնող հրաբխի...

*
* *

Լուսադեմին գնդապետը քնեց: Հարևան սենյակում նույնպես ձայն չկար: Դիմիյ լսվում էր միայն պահակի համաչափ քայլվածքը:

Օլյան դուրս սողաց ծերունու գրկից, մոտեցավ մահճակալին, ընկավ մեռած մանկան վրա, սկսեց լուռ հեկեկալ: Մանկան արյունոտ գլուխը նման էր չորացած ցողունի վրա թառամած այն կակաչին, որ դեռ նոր էր բացվում, բայց. ձեռքը կտրել էր նրա կյանքի թելը:

Մայրը կսկիծով նայում էր որդու կիսաբաց աչքերին, ան-
ընդհատ համբուրում նրա սառը, դալուկ այտերն ու ճակատը:
Նրան թվում էր, թե ուր որ է կբացվեն նրա աչիկները, կփպտան-
անմեղ, անարատ ժպտով: Այդ նա կհանի իր փամփիլի, վար-
դագույն թաթիկները, կշոյի մոր դեմքը, կխճճի մազերը, կխա-
ղա աչքերի հետ: Բայց ոչ, նա անշարժ էր: Մայրը վերցրեց
նրա սառած ձեռքը, մոտեցրեց իր շուրթերին, կարծես իր շնչով
կենդանութուն տալու նրան: Հետո նա քանդեց բարուրը, ինչ-
պես շատ անգամ էր արել, որպեսզի հրճվի մանկան անհանգիստ
տոտիկների խաղով: Սակայն այդ տոտիկներն այժմ անշարժ
էին, գունատ, ինչպես կողք կողքի դրված զույգ մոմեր: Ոչ, նա
այլևս չի կենդանանա, այլևս չի թոթովի...

Այս գիտակցումը հետզհետե մրրկեց տարաբախտ մորը... Նա
շարունակում էր լայն հոծ աչքերով նայել մանկան եվ շնչա-
պառ հեծալ: Այդ աչքերի մեջ բորբոքվում էին վրեժխնդրության
կրակները: Խոր զայրույթից նա կրճատում էր իր շրթունքները,
կրճատացնում ատամները եվ բռունցքները սեղմում մի այնպիսի
ուժով, որ եթե նրանց մեջ քար լինե՝ կփշրվեր: Արցունքները
չորացել էին, թախիծն՝ անցել, վրա էր հասել վճռականության
և անզուսպ ցասումի ընդհան: Պապանձված լեզվի տեղ խոսում էր
նրա հոգին, մայրական հոգին, մայրական սիրտը:

Օլյան բնազդորեն շուռ եկավ: Գնդապետը դեռ մրափած
էր: Օլյայի աչքովն ընկավ նրա դողացող շնչափողը: Ոժերը
կներնն, արդյոք, այնպես սեղմելու այդ զգվելի, ցցուն կոկորդը,
որ հրեշն այլևս չարթնանա: Հանկարծ նա նկատեց գնդապետի
պիստոլետի կոթը գուրս էր եկել բարձի տակից: Օլյայի սիրտն
անհանգիստ բաբախեց: Գյուտ արած մարդու ուրախությամբ
նա ուզեց շտապել դեպի պիստոլետը, բայց վարանած կանգ ա-
ռավ: Ո՛չ, կրակոցի ձայնից կարող է աղմուկ բարձրանալ: Նա
ակամայից հիշեց, որ իր նպատակի համար խոհանոցում ավելի
հարմար գործիք կա: Նա զգուշ մտավ խոհանոցը և մթության
մեջ խարխափելով սկսեց որոնել ցանկացած իր. շուտով գտավ այն:
Դա կարճ կոթով մի կացին էր՝ ռուս ժողովրդի սիրած գործիքը:
Վերցնելով այն, Օլյան պատին քսվելով դանդաղ սողաց դուրս:

Պահակը հասել էր շենքի անկյունն ու կանգ առել: Շուտով
նա ետ շրջվեց ու շարունակեց իր համաչափ քայլվածքը: Նա
մոտենում էր Օլյային: Օլյան այնպես սեղմվեց պատին, որ կար-

Յես ուզում էր նրա մեջ մտնել: Երբ պահակը հասավ նրան ու անցավ նրա առաջից — նա երկու ձեռքով բարձրացրեց կայինը և որքան ուժ ուներ իջեցրեց պահակի գլխին: Հարվածը դիպուկ էր: Պահակն առանց ձայն հանելու օրորվեց ու փովեց գետնին՝ ետքսի վրա: Օլյան նրա տակից դուրս քաշեց հրացանը:

Քիչ հետո նա նորից սենյակի մեջ էր. ինչ որ խռպոտ ձայն լսվեց: Օլյան հավեց պահարանին, բայց զգաց, որ գնդապետը զառանցում է: Լսելի դարձավ նրա կոտորված ռուսերենը.

— Դըն-դա-կա-հա-րե՛լ... կախել...

Շուտով այդ ձայնը ևս լռեց: Օլյան մոտեցավ նրան, հրացանի սվինը մոտեցրեց նրա կոկորդին՝ ուղիղ ծնոտի տակ և ամբողջ ուժով ու մարմնի ծանրությամբ ընկավ կոթի վրա: Դնդապետը թալրտաց, մեռնողի բնադդով ամուր բռնեց կոկորդի մեջ մխրձված սվինի կոթը... բայց արդեն ուշ էր...

Արյունն առատորեն ծծվում էր բարձի մեջ...

Հոգեկան տագնապից աչքերը չռած, Օլյան նայում էր բարձի ձեռմակությունը ներկող արյունին և կարծես զննում, ստուգում էր, թե ֆաշիստների արյունն իսկապե՞ս ուրիշ գույնի է, ինչպես իրենք էին համոզված...

*
* * *

Դուրսը դեռ տիրում էին նույն խավարն ու անդորրությունը: Լռել էր նաև պահակի համաչափ քայլածքի ձայնը: Շրջապատի համատարած արյան ու արցունքի մռայլ թագավորության մեջ կարծես գետն էլ էր լռել ու ամքել:

Օլյան շարժվեց դեպի կից սենյակը, ուր գտնվում էին իր բախտակից ընկերուհիները: Նա փորձեց իմանալ, թե ինչ է կատարվել այնտեղ: Ձայն չկար: Դռան նեղ բացվածքից տեսավ, որ բոլորն էլ քնած են: Զգուշությամբ ավելացրեց դռան բացվածքն ու ներս սողաց, հուշիկ քայլերով մոտեցավ հատակին ընկած աղջիկներից մեկին, քաշեց նրա փեշից: Դա Կատյան էր: Վերջինս բացեց աչքերն ու անհավատ թարթեց: Իր գլխի վերեւ կանգնած էր Օլյան՝ ալլալված դեմքով, խառնիխուռն մազերով: Կատյան դանդաղ նստեց տեղում: Նա ուզում էր բան հարցնել, բայց Օլյան իսկույն փակեց նրա բերանը, հասկացնելով, որ դրա ժամանակը չէ:

Նրանք հերթով արթնացրին բոլոր կանանց. նրանք ըստ-
գլերի համարվեցամբ մեկ մեկ դուրս սողացին:

Օլյան մտով նույն սենյակը, ուր իր լճացած արյան մեջ
ապս դեկ էր գնդապետը: Նա հոշոտված մանկան դին փաթաթեց
շորերի մեջ, գիրկն առավ ու դուրս եկավ պատշգամբ: Այստեղ
շփոթված կանգնած էին մյուս կանայք: Դիակը նրանցից մեկի
գլերը տալով, զուսպ ձայնով դիմեց մյուսներին.

— Ի՞նչ եք կանգնել, ո՞ւմ եք սպասում, իսկույն իջեք
պարտեզ... Կատյա, դու մնա...


Կատյան մնաց, իսկ մյուսները իջան: Քիչ հետո նրանք
հրկուսով տնից դուրս բերեցին մրափած սպաների ավտոմատ-
ներն ու ձեռքի նռնակները: Հետո դրսից փակեցին բոլոր դռնե-
րը: Օլյան Կատյային պատվիրեց իջնել պարտեզ, վերցնել մյուս
կանանց ու գետափով շարժվել դեպի անտառը:

Երբ կանայք դուրս էին գյուղից, նրանց ուկանջին հասավ
մի ահաբեկ դրդոյուն: Սարսափած ետ շրջվեցին: Խավարը լիզե-
լով ինչ որ բոց էր բարձրանում:

Հրդեհի բոցերի մեջ ճարճատուժ էր Սեմյոն Կուրյովի
տունը: Շուտով հեղհեղալ վաղելով կանանց հասավ Օլյան: Նա
տառնապահար ու մտացրիվ շոշափեց ընկերուհիների գլիրը, գտավ
մանկան բարուրը, վերցրեց, սեղմեց իր կրծքին ու արագ քայ-
լերով ընթացավ առաջ. կանայք հետևեցին նրան: Թե ինչու էր
տանում նա այդ մեռած մանկան — դժվար է ասել, միայն
նրա մայրական սիրտը զգում էր, որ դիակն անգամ պետք է
տանել, պետք է փրկել ետևում մնացող զիշակեր գաղանների
հոշոտող մագիլներին ..

Ստեփանավան

1942 թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Երկու խոսք	էջ 3
2. Մեղրիում	5
3. Լեռնային օրենք	29
4. Դեպի «Սիրո և խաղաղության ամբողջ»	49
5. Մեռելիքում	61
6. Մոր վրեժը	72

Պատ. խմբագիր՝ Ռ. ԱՂԱԲԱՅ

Ստորագրված է տպագրության 25 հունիսի 1946 թ.

Որի՝ 21914: Պատյեր 433: Տիրա՝ 3000, տպ. 5 մամուլ:

Տպագրված է «Զարյա Վոստոկա»-ի հրատարակչության՝ Ա. Ֆ. Մյաննիկյանի
անվ. տպարանում: Թբիլիսի, Ռուսթափելու պող. № 36:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028497

9126, 4 St.

